




ՉՄԻԱԾԻՆ

18





Ի Ը
Տ Ա Ր Ի



ԷԶՄԻԱԾԻՆ



ՈՐ - 15. 457



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Կոպրիկ

1972





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Վեճաբան Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում	3
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և բույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	6
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	9
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ	11
Տ. ԳԵՎՈՐԳ ՎՐԴ. ՍԵՐԱՅԳԱՐՅԱՆ—Հանգիստ Նորին Սրբություն համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս Ս. Տ. Եփրեմ Բ-ի	13
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ	17
ԱՎԵՏԻՔ ՍՐԿ. ԱՐԱՖԱԶՅԱՆ—Գրական-գեղարվեստական հանդես հոգևոր ճանարանում	19
Մայր Աթոռի տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակի առիթով	21
ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը	24
Սկսուածք ութ-ձայների (նոտաներ)	40
Յուզակ Մայր Աթոռ ու Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	44
Հանգիստ արժանապատիվ տ. Հակոբ ավագ քահանա Քելամյանի	48
Հ. Ս. Անապան—Հայ համաքաղաքային գրականությունը և հայ մատենագրության համաքաղաքառը	49

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտագրության 22/III 1972 թ.: Ստորագրված է տպագրության 17/V 1972 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 221

Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարան, 1972 թ.



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ


S. S. Վ Ա Ջ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՂՈՍԱՆԱ
ՀԱՄԱՅՈՒՐՄԱՆ
ՏՐԱՊԵՏՈՒՄ
ԿՈՄԻՏԵ



1925





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1972 թ. ապրիլի 2)

Յանուն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ, ամեն:
Այսօր սոճն է մեճ ավետիսին: Այսօր Ջատիկ է:
Այսօր «չարեաւ Քրիստոսս ի մեռելոց»:

Հավատացյալ և սիրեցյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռքս աշխարհի:

Փրկչին մեր Քրիստոսի Հարության ավետիսով կողջունենք ձեզ ուրախ սրտով և Փրկչի Իջման այս սուրբ սեղանի առաջ կաղոթենք, որ բոլորդ արժանի դառնաք Իր լույս Հարության շնորհներուն: Ինչպես Հիսուս, խաչափայտին վրա մեռավ աշխարհի մեղքը բառնալով, և ապա հարություն առավ հաղթելով մահը, այսինքն պտուղը մեղքին, այնպես ալ ձեզի, հարազատներ Մեր, կմաղթենք որ երկնային ողորմությամբ և ձեր բարի կյանքով ու առաքինի գործերով, հաղթող հանդիսանաք ընդդէմ մեղքին, ընդդէմ չարին, և հոգեւրդին վերածնիք, վերանորոգվիք՝ արդարացած, սրբացած:

Հայտնի է բոլորիս, թե աշխարհի վրա մարդը միակ էակն է որ իր ինքնության, իր եսին գիտակցությունը ունի, որ կըմբռնէ իր գործած չարն ու բարին, որ հետևաբար պատասխանատու է իր վարած կյանքին ու կատարած գործերուն համար: Մարդ էակը ուրե՛մն իր գիտակցության առջև հնարավորությունը ունի հասկնալու և դատելու իր արարքները՝ եթե անոնք բարի են կամ թե չար:

Մարդու այս ներքին գիտակցական վիճակը կամ կարողությունը կկոչենք խիղճ: Խրիմյան Հայրիկ պատկերավոր կերպով այսպես կսահմանէ զայն՝ «Խիղճը հաշվեախաճաճ ոստիկան է որ իբրև դատավոր, սրտի աթոռին վրա բազմած կխայթահարէ միշտ»:

Մեր մայր դաստիարակ եկեղեցին կմղէ մեզ բոլորս, որ Աստուծո առջև անխառն անկեղծությամբ՝ ինքնաքննության, ինքնաքննադատության են-

թարկենք զմեզ և մեր արարքները, սեփական խղճի դատաստանի միջնորդությամբ:

Քննել մեր եւր, դատել մեր գործերը ու զոջումի գալ մեր մեղքերուն համար, մեր սխալներուն և տկարություններուն համար, կենթադրե ամեն բանն առաջ բացարձակապէս անկեղծ ըլլալ՝ անվախ ու վճռական: Մեր սեփական անձին և գործերուն հանդեպ անկեղծ ու անաշտ դատավոր դառնալ՝ բարոյական հերոսություն մըն է որուն քիչերը միայն կրնան հասնիլ: Պետք է իրավ քրիստոնյա ըլլալ, բարձրանալու համար այդ բարոյական կատարին: Ահա այդպիսի անկեղծություն և ինքնադատաստան և զոջում կպահանջե մեզմե մեր եկեղեցին:

Հրաժարիլ մեղքեն, ազատիլ չարիքեն, սխալեն, անկեղծորեն զոջալ՝ ու խոստովանիլ զանոնք, և ապա ապաշխարությամբ ու բարի գործերով արդարանալ, ահա քրիստոնեական ըմբռնումը՝ մարդու բարոյական ինքնակերտման, արդարացման ու փրկության, որ հոգեկան մեծագույն հեղաշրջումը կստեղծե մարդկային գիտակցության ու պատմության մեջ:

Հիշենք պատարագիչ քահանայի խոսքերը ուղղյալ հավատացյալ ժողովորդին ամեն կիրակի ս. Սեղան բարձրանալէ առաջ. «Տէր Աստուած տացէ ձեզ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս»:

Առանց մեղքի գիտակցության՝ չկա խիղճ, առանց խղճի՝ չկա զոջում և բարին գործելու կամեցողություն, առանց զոջումի և բարի գործի՝ չկա մեղաց թողություն, չկա արդարացում, առանց արդարացման, չկա փրկություն, չկա Աստուծո արքայություն:

Իսկ առանց Աստուծո արքայության տեսիլքին՝ չկա արդարություն, չկա խաղաղություն, չկա երջանկություն մարդկային աշխարհին մեջ:

Եվ խորհիլ թե մանավանդ մեր օրերուն, համայն մարդկությունը ինչքան կըղձա հասնիլ, վերջապէս հասնիլ, մալահանգիստը երջանիկ խաղաղության... մալահանգիստ որ տակավին, ավա՛ղ, երազ մըն է լոկ, տեսիլք մը լուսաշող: Բայց նաև պատգամ մը հզոր ու հզորացուցիչ:

Հավիտենապէս հզոր պատգամն այդ աստվածային երկինքներեն աշխարհին ընծա բերավ Ինքը Քրիստոս, ցույց տալու համար ճանապարհը դեպի մալահանգիստը երջանիկ խաղաղության ու փրկության, մարդու ազատագրումովը մեղքի և մահվան կապանքներեն:

Եվ ահա երկու հազար տարիներ շարունակ՝ նույն Ինքը Քրիստոս, մարդկային խղճի բարձունքներեն, համայն մարդկության կբաշխե միշտ նույն պատգամը փրկարար հրաշափառորեն աստվածային դարձած գողգոթայի աշխարհասասան Իր զոհաբերությամբ և ապա Իր ամենահաղթ Հարությամբ:

Այսօր Զատիկ է, սիրելի հավատացյալներ, և մենք բոլորս անասման մխիթարությունը ունինք Հարության մեծ ավետիսը ընդունելու այստեղ, սուրբ Էջմիածնի բազմադարյան այս տաճարի կամարներուն տակ: Այսօր, այստեղ, մանավանդ կզգանք ճշմարտությունը և կենդանությունը Փրկչին մեր Քրիստոսին և Իր Ավետարանին, զոր մեր նախնիք, առաքելական դարեն իսկ սկսյալ, իրենց սրտին մեջ ամուր պահպանեցին և իրենց աչքերը փակեցին հավետ ապրելու հույսով:

Այսօր, այստեղ, մեզի հետ են դարերը որ անցան, մեզի հետ են լուսաբնակ հայրերը մեր, մեզի հետ է բովանդակ հոգին համայն հայության:

Այսպէս է որ, ինչպէս երկու հազար տարիներ առաջ՝ Հայաստանի առաջին քրիստոնեաները, ինչպէս երանելի դարուն սուրբն Քրիզոստոմ Լուսավորիչի, ինչպէս հերոսական օրերուն Ղեկնդրանց և Վարդանանց սուրբերուն, մենք՝

գավակները նույն եկեղեցիին և նույն ժողովուրդին հայոց, նույն հավատքով, նույն անմար հույսով ու ցնծությամբ՝ հաղթականորեն կերգենք միասիրտ ու միահոգի՝

**«Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց
Եւ յարութեամբն իրով մեզ գկեալնս պարգևեաց»:**

Այսօր հայությունը ամբողջ, բայց մանավանդ հայաստանցի աշխատավոր չարքաշ ժողովուրդը որ անա ավելի քան հիսուն տարիներն ի վեր իր ճակտի քրտիներով ու ստեղծարար տենդով քարեն հաց և լույս կհանե, գուցե ավելի քան անցյալի մեջ կհավատա Հարության հրաշքին և հավերժական կյանքին, վասնզի ինք ևս խաչված ու գրեթե մեռյալ էր, բայց հարություն առավ երկնային արդարությամբ ու իր քաջ որդվոց արյան հեղմամբ: Հարություն առավ ու վերածնավ՝ իբրև ազգություն, իբրև պետություն, իբրև կառուցող ու ծաղկող հայրենիք ամենայն հայոց:

Մահվան ու չարին կապանքներեն ազատագրված հայ ժողովուրդը, քաջ զիտե այսօր գնահատել կյանքը և շինարար աշխատանքը, որոնք իրենց առատ պտուղները կարողացան սույ խաղաղության պայմաններու մեջ:

Ահա թե ինչու այսօր, երբ մեր եկեղեցին կփառավորե նվիրական հիշատակը Հիսուսի հարության, և կոզեկոչե բարիին ու կյանքին հաղթությունը ընդդեմ չարին ու մահվան, մենք՝ բոլոր հայերս անգամ մը ևս կխոստովանենք թե կհավատանք հայուցյալ Փրկչին Քրիստոսին, կհավատանք մարդու բարոյական հանճարին, կհավատանք մարդոց ու ազգություններու եղբայրության, կհավատանք այն բոլոր ուժերուն որոնք կգործեն ու կպաշարին աշխարհի վրա հաստատելու համար խաղաղությունը տևական:

Այո, կհավատանք այս բոլորին, որովհետև ճշմարտապես «Յարեալ Քրիստոս ի մեռելոց»:

Հարազատ գավակներ Մեր, սուրբ Հարության ավետիսով, անմար լուստ խորան սուրբ Էջմիածնեն, թող բաշխվին ձեզի ամենուղ շնորհները բոլոր և սերն ու խաղաղությունը Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի, որուն փառք հավիտյանս, ամեն:

Ձեզ և մեզ, մեծ ավետիս՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթողիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԳԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԳԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն
ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱԶՍԻՄՈՍ ԼԱՅԵՂ Ե-ԻՆ (Բեյրութ),

Անտիոքի սիրիական կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՎ Բ-ԻՆ (Բեյրութ),

- Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն **Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Հ Ա Կ Ո Ֆ Գ - Ի Ն** (Դամասկոս),
- Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն **Ա Բ Ո Ի Ն Ա Թ Ե Ո Ֆ Ի Լ Ո Ս Ի Ն** (Ադիս-Աբեբա),
- Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն **Բ Ա Ս Ե Լ Ի Ո Ս Օ Գ Ե Ն Ա - Ի Ն** (Քոթայամ),
- Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն **Ե Փ Ր Ե Մ Բ - Ի Ն** (Թբիլիսի),
- Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **Ժ Ո Ի Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն** (Բուխարեստ),
- Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **Մ Ա Զ Ս Ի Մ Ի Ն** (Սոֆիա),
- Լիբանանի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն **Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ե Ի Ն** (Բեյրութ),
- Քեներեբի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **Մ Ա Յ Ք Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն** (Լոնդոն),
- Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **Հ Ե Ր Ո Ն Ի Մ Ո Ս Ի Ն** (Աթենք),
- Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն **Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն** (Բելգրադ),
- Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն** (Վարշավա),
- Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **Դ Ո Ր Ո Ֆ Ե Ի Ն** (Պրագա),
- Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն **Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն** (Բեյրութ),
- Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն **Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն** (Նիկոզիա),
- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
- Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն **Կարդինալ Ֆ Ր Ա Ն Յ Կ Յ Ո Ն Ի Գ Ի Ն** (Վիեննա),
- Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն **Կարդինալ Ֆ Ր Ա Ն Ս Ո Ի Ա Մ Ա Ր Տ Ի Ի Ն** (Փարիզ),
- Մարսելի Արքեպիսկոպոս, Գերաշնորհ **Ռ Ո Ժ Ե Է Զ Ե Գ Ա Ր Ե Ի Ն** (Մարսել),
- Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն **Յ. Պ. Մ Ա Տ Ո Ի Լ Ի Ս Ի Ն** (Ռիգա),

- Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Ա. Լ. Ֆ. Բ. Դ. Տ. Ո. Մ. Ի. Ն. Գ. Ի. Ն. (Տալլին),
- Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի Հ. Ո. Վ. Հ. Ա. Ն. Ն. Ե. Ս. Ա. Հ. Ա. Ր. Ո. Ն. Յ. Ա. Ն. Ի. Ն. (Բեյրութ),
- Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
Է. Բ. Մ. Ի. Ն. Ի. Ո. Ո. Ն. Կ. Ա. Բ. Ի. Ի. Ն. (Երուսաղեմ),
- ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների Ազգային խորհրդի ընդհանուր
քարտուղար, Գերապատիվ հայր Է. Բ. Ո. Ի. Ի. Ն. Է. Ս. Փ. Ի. Ի. Ն. (Նյու-Յորք),
- Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
Ժ. Ա. Ն. Ռ. Յ. Ո. Ի. Պ. Ի. Ն. (Բաղդադ),
- Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ հայր
Պ. Ո. Ղ. Ո. Ս. Վարդապետ Ա. Ն. Ա. Ն. Յ. Ա. Ն. Ի. Ն. (Վենետիկ),
- Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ հայր
Գ. Բ. Ի. Գ. Ո. Բ. Ի. Ս. Վարդապետ Մ. Ա. Ն. Յ. Ա. Ն. Ի. Ն. (Վիեննա),
- Վերապատվելի Հ. Ա. Ր. Ո. Ի. Թ. Յ. Ո. Ի. Ն. Հ. Ե. Լ. Վ. Ա. Ծ. Յ. Ա. Ն. Ի. Ն. (Մարսել),
- Վերապատվելի Ս. Ե. Ն. Ե. Գ. Ե. Բ. Ի. Բ. Մ. Ս. Յ. Ո. Ի. Լ. Ա. Հ. Յ. Ա. Ն. Ի. Ն. (Նյու-Յորք):

Այսօր երբ վերստին կավետվի մեզ բոլորիս բարի լուրը Քրիստոսի Հարության, Մենք հուսացյալ սրտով ու եղբայրական, հարգալից սիրով կու գանք Մեր աղոթքը միացնելու Ձերդ Սրբության աղոթքներուն որ սուրբ Հարության լույսը առատապես շողա բոլոր մարդոց և ժողովուրդներու կյանքի ճանապարհին, որ ամեն տեղ հաղթահարվին մեղքին ու չարին ուժերը, որ ամեն տեղ մարդկային աշխարհին մեջ աճին ու պայծառանան սերն ու բարի կամեցողությունը, ճշմարտությունն ու արդարությունը խաղաղությամբ:

Մեծ ավետիսին ուրախությունը Մեր հոգույն մեջ, Ձերդ Սրբության կրկնակայացնենք Մեր ամենաջերմ մաղթանքները որ Աստված Ձեզի շնորհե երկար տարիներու կյանք և Դուք տեսնեք հաջողությամբ պսակումը Ձեր սրբազան առաքելության ի փառս Քրիստոսի և ի փառս ձեր մեծ և սուրբ եկեղեցվո:

Միշտ Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ


ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

*
* *

Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրբազին ոգին քույր եկեղեցիների միջև:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ
 ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
 ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ
 ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՍԱՆԱԿՎԱԾ
 ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա.-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐԻՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵՆՆԱՄ ԲՈՒՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՆԵՐԻՆ
 ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Այսօր երբ համայն աշխարհին վերստին կապետվի բարի լուրը Քրիստոսի Հարության, ամենայն հալոց անմար հավատքի վեմ սուրբ Էջմիածնեն Մենք հուսացյալ սրտով կաղոթենք որ լույս Հարության շնորհները բաշխվին համայն մեր ժողովուրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, հառավել ճառագայթում հալոց քրիստոնեական հավատքի և հառավել շինություն

ու պայծառություն մեր եկեղեցական ու ազգային կյանքին:

Մեր սրտագին մաղթանքն է նաև որ նույն շնորհներով լուսավորված ու գորացած, ձեր պատմական Աթոռը և ուխտանվեր ձեր միաբանությունը շարունակեն իրենց հոգեշեն առաքելությունը մեր Մայր եկեղեցվո միության և մեր հավատավոր ժողովուրդի միասնության ոգիով, ի մխիթարություն մեզ բոլորիս և համայն հայության:

Ձեզի, սիրեցյալ Եղբայրդ, սիրո ուշույն և ամեն բարի մաղթանք, երկնային ողորմությամբ ու օգնականությամբ:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷԶՄԻԱՄԻՆ

* * *


Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուպեճկյան հիմնարկության կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Արգարյան Ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտտերտաուն), Կալկասթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկասթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

* * *

Փրկչի հրաշափստ և սուրբ Հարության տոնի սոթիվ Ամենայն Հայոց Վեհափստ Հայրապետի անունով շնորհավորական գրություններ ստացվեցին Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի Ս. Տ. Խորեն Ա կաթողիկոսից, Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքից, Թուրքիո հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքից:

Փրկչի հրաշափստ և սուրբ Հարության տոնի սոթիվ Ամենայն Հայոց Վեհափստ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաչերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ
ՔԱՐՈՉ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 2-ին, կիրակի.—Չատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այեներ Մասիսի թիկունքից արևի գարնանային ճառագայթները ողորում են Արարաւոյան դաշտը: Օրը պայծառ է, խաղաղ և ամենուրեք տիրում է գարնանային աշխուժութիւն:

Հալատացւալների խոտներամ բազմութիւնը դեռ վաղ առավոտվանից շտապել էր ներկա լինելու ստավոտյան ժամերգութեանը:

Ժամը 11-ին Մայր տաճարի զանգերի ուրախ դողանջն ազդարարում է ս. պատարագի սկսվելը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, զգեստավորված, Մայր Աթոռի միաբանութեան ուղեկցութեամբ, առաջնորդվում է Մայր տաճար՝ գատկական սուրբ պատարագ մատուցելու:

Սուրբ պատարագի երգեցողութիւնը կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից ստաջ, օրվա սուրբ խորհրդի համապատասխան, Վեհափառ Հայրապետը խոսում է գեղեցիկ մի քարոզ, որը նույն երեկոյան, ժամը 11.30-ին, ձայնավորվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրւ-

վել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Սուրբ պատարագին ներկա են լինում բազմաթիվ սիշուքահայ ուխտավորներ տարբեր գաղթօջախներից:

Ս. պատարագին ներկա են լինում նաև Մոսկվայում հեղգիայի դեսպան Կրն. Ժակ Դեշան՝ իր հարգելի տիկնոջ հետ, և Մոսկվայում Իտալիայի դեսպանատան զինվորական կցորդ Կրն. Ռոբերտո Կապուցցոն՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հալարտ ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով ստաջնորդվում է Վեհարանի գահաարան:

Հանուն Մայր Աթոռի միաբանութեան և ներկա գտնվող ողջ հալատացւալների, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Մանթոքյանը շնորհաւորում է Վեհափառ Հայրապետի Չատիկը, ցանկանում էրան բաշտողջութիւն, արեշատութիւն՝ ի փառս հայ եկեղեցու պայծառութեան:

Այս օրհնութեան խոսք է ասում Ն. Ս. Օծոթյունը, շնորհաւորում համայն հայութեան ս. Չատիկը, օրհնում մեր ազգն ու եկեղեցին, հայրենիքում և ի սիշուռս աշխար-

հի, ցանկանում նրան խաղաղ, բարգավաճ ու երջանիկ օրեր:

Բոլոր ներկաները հերթով համբուրում են Վեհափառի ս. Աջը և շնորհավորում Նրա Չատիկը:

Վերջում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորների, հետաքրքրվում նրանց գաղթօջախների ազգային-եկեղեցական կյանքով և տալիս էր հայրական օրհնությունը:


Վեհաբանում Հայոց Հայրապետը ընդունում է նաև զատկական ջերմ շնորհավորանքներ ս. Չատիկի տոնի առիթով մասնավորաբար ս. Էջմիածին ժամանած հարգարժան ժակ Դեշայի ու իր տիկնոջ և Ումբերտո Կապուցցոյի ու իր տիկնոջ:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ գրույց՝ օրվա հանդիսությունների հոգեպարար արարողությունների վերաբերյալ, որոնք խորապես տպավորել էին հարգելի հյուրերին:

Բելգիայի դեսպանը մասնավոր ջերմությամբ նշում է Հայոց Հայրապետի այցելությունը Հոռոմ 1970 թվականի մայիսի 8—12 օրերին և շեշտում երկու պատմական եկեղեցիների հոգևոր պետերի հանդիպման էկոմենիկ նշանակությունը:

Այս առիթով Հայոց Հայրապետը հարգարժան հյուրերին նվիրում է «Հայկական եկեղեցիներ» արված ի հիշատակ նրանց այցելության Մայր Աթոռ ս. Էջմիածին:





ՀԱՆԳԻՍ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ
ՊԱՏՐԻԱՐԲ-ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԵՓՐԵՄ Բ-Ի
(1896—1972)

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն Տ. Տ. Եփրեմ Բ-ն ապրիլի 7-ին (Ռին տոմարով), Ավագ ուրբաթ օրը, Թբիլիսիի վրաց կաթողիկոսարանում 76 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն:

Վրաց քույր եկեղեցին և հավատավոր ժողովուրդը ծանր կորուստ են կրում:

Վրաց եկեղեցու նորընտիր տեղապահ տ. Դավիթ միտրոպոլիտը՝ Հայոց Հայրապետին ողորկած իր մասնավոր հեռագրով, գուժում էր Վրաց եկեղեցու կրած կորստի մասին:

Հայոց Հայրապետը՝ մեղմելու համար քույր եկեղեցու մեծ վիշտը, որոշում է անձամբ մասնակցել թաղման արարողություններին և իր եղբայրական մխիթարության և սիրտհանքի խոսքը ասել հանուն Մայր Աթոռ ս: Էջմիածնի և հայ եկեղեցու:

Ապրիլի 11-ին, երեքշաբթի օրը, ժամը 23.40-ին, Վեհափառ Հայրապետը գնացքով մեկնում է Թբիլիսի:

Այս տխուր առիթով Վեհափառ Հայրապետին ընկերակցում են, որպես հայ եկեղեցու պատվիրակություն, վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, տ. Գևորգ վրդ. Սերապարյանը՝ որպես գավազանակիր, և դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Ապրիլի 12-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, գնացքը ժամանում է Թբիլիսի: Տակավին «Նավթոլտի» կայարանում

Հայոց Հայրապետին դիմավորում և բարիգալատյան խոսք է ասում վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների ու քահանայից դասի ողեկցությամբ:

Կես ժամ անց գնացքը հասնում է Թբիլիսիի քաղաքային կայարան, ուր Ամենայն Հայոց կաթողիկոսին դիմավորում են վրաց կաթողիկոսական նորընտիր տեղապահ տ. Դավիթ միտրոպոլիտը, եպիսկոպոսաց և քահանայից դասով հանդերձ:

Հայոց Հայրապետին ողջունում ու բարի գալուստ է մաղթում նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետին ատրնթեր կրոնական գործերի լիազոր պրն. Դիմիտրի Ծալուտաշվիլին և այլ անձինք:

Վեհափառ Հայրապետը կայարանում Իր խորին վիշտն ու ցավակցությունն է հայտնում եղբայրական վրաց եկեղեցու հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչներին և նրա հավատավոր ժողովրդին՝ հանգուցյալ Տ. Տ. Եփրեմ Պատրիարք-կաթողիկոսի մահվան տխուր առիթով:

Իր պատասխան խոսքում տ. Դավիթ միտրոպոլիտը, հանուն վրաց եկեղեցու և հավատավոր ժողովրդի, խորին շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին և երախտագիտության խոսք ասում, որ Նորին Սրբությունը անձամբ եկել է Թբիլիսի՝ վրաց եկեղեցու վիշտը կիսելու համար:

Այնուհետև վեհափառ Հայրապետը Իր շքախմբով աստշնորդվում է «Իվերիա» հյուրանոցի Իրեն հասկացված հարկաբաժին, որպես վրացական բույր եկեղեցու պատվավոր հյուր:

Ժամը 18-ին, վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հայ եկեղեցու պատվիրալուծությունը վրաց ա. Սիոն Մայր եկեղեցում, ուր դրված էր Ս. Տ. Եփրեմ Բ կաթողիկոսի դագաղը, կատարում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն:

Ժամը 20-ին վրաց եկեղեցու խորհուրդը թաղման արարողություններին մասնակցելու համար Թբիլիսի ժամանած հյուրերի պատվին «Իվերիա» հյուրանոցի ճաշարանում տալիս է ընթրիք, որին ներկա են լինում Հայոց Հայրապետը՝ Իր շքախմբով, նաև Կիևի և Ուկրաինայի ու Ֆիլարետ միտրոպոլիտը, ու Պիտրիմ արքեպիսկոպոսը, Կրասնոդարի և Կուրսկի ու Ալեքսի արքեպիսկոպոսը և նրանց ուղեկցող այլ անձինք, որոնք կազմում են ռուս եկեղեցու պատվիրակությունը այս տխուր առիթով:

Ամենապատիվ ու Դավիթ միտրոպոլիտի ասաջարկով ոգեկոչվում է հիշատակը հանգուցյալ Ս. Տ. Եփրեմ Բ-ի:

Այնուհետև վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում ու Դավիթ միտրոպոլիտի և ապա Համայն Ռուսաց և Մոսկվայի Պատրիարք, Նորին Սրբություն Պիմենի կենացը:

Պատասխան շնորհակալական խոսքեր են ասում Հայոց Հայրապետին ու Դավիթ և ու Ֆիլարետ միտրոպոլիտները:

Ապրիլի 13-ին, հինգշաբթի, ժամը 10—16-ը, վրաց ա. Սիոն եկեղեցում տեղի է ունենում հոգեհանգստյան ա. պատարագ և թաղման կրթ, որ կատարում են պատշաճ շուքով վրաց կաթողիկոսական նորընտիր տեղապահ ու Դավիթ միտրոպոլիտը, ու Լիսա միտրոպոլիտը, ու Ջիևովի եպիսկոպոսը և ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակներ ու Ֆիլարետ միտրոպոլիտը, ու Պիտրիմ արքեպիսկոպոսը, ու Ալեքսի արքեպիսկոպոսը և այլ շուք բաժն վրացի և ռուս հոգեվորականներ:

Հոգեհանգստյան ա. պատարագին և թաղման արարողությանը ներկա է լինում Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը՝ ի գլուխ հայ եկեղեցու պատվիրակության, վրահայոց թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և Թբիլիսիի հայոց քահանայից դպար:

Դամբանական խոսքով հանդես է գալիս վեհափառ Հայրապետը:

«Ձի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին»:

Սգակիր եղբայրներ Մեր և ժողովուրդ:

Համայն վրաստանի կաթողիկոս Եփրեմ Բ Հայրապետը ոչ ևս է մեր մեջ, այլ հանգչավ ի Տեր: Եվ անախարհիկ Մենք պատեղ ենք, ձեր կողքին, որպեսզի միասին աղոթենք Նրա հոգևորն խաղաղության համար և միասին մխիթարվենք սուրբ Հոգևոր:

Մեծ աղոթներգուն պատվիրում է եղբայրներին միշտ միասին լինել թե՛ ուրախության և թե՛ տխրության պահերին: Մենք ձեր եղբայրներն ենք հարազատ և անա թե ինչու Հայաստանից եկանք՝ ձեր կողքին լինելու համար, ձեր վշտի այս ժամին: Եվ ճիշտ այս պահին, Մեր հատուկ կարգադրությամբ տխուր և դանդաղ դողանքում են նաև զանգակները մեր Մայր Աթոռ ա. Էջմիածնի և բարձրանում են դեպի երկինք աղոթքները մեր միաբանության, վասն հանգստյան հոգևորն Եփրեմ Բ կաթողիկոսի:

Մեր հայրապետական ասաջին իսկ օրերից անձամբ ճանաչեցինք ձեր հանգուցյալ Հայրապետին և մնացինք մինչև Նրա կյանքի վերջը՝ բարեկամներ, հոգևոր եղբայրներ ու գործակիցներ: Մենք միշտ եղբայրական սիրով և զնահատանքով համակված ենք եղել դեպի Եփրեմ կաթողիկոսի անձնավորությունը: Նա լուսամիտ և զարգացած հոգևոր մի դեմք էր աշխուժով ու եռանդով լեցուն, նվիրված իր սուրբ եկեղեցուն և իր ժողովրդին: Եփրեմ Բ կաթողիկոսը ժրջան և հավատավոր մի գործիչ էր՝ եկեղեցիների միջև մերձեցման և սերս գործակցության ուղղության ճշմարիտ Էկումենիկ ոգով տոգորված: Նա միաժամանակ անձանձրույթ ու հարատև քարոզիչն ու շատազով իր աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության նվիրական գաղափարներին և վերջապես Նորին Սրբությունը ջերմ մի հայրենապետ էր, բառին ամենաազնիվ իմաստով, այնպես, ինչպես եղել էին բոլոր վրացի մեծ հայրապետները պատմության ընթացքում: Առանձնապես Մեզ համար մխիթարական էր հաստատել, որ Եփրեմ կաթողիկոսը նախանձախնդիր էր վրացոց և հայոց եկեղեցիների ու ժողովուրդների անխախտ եղբայրության ամրապնդման:

Թեև հառաջացած տարիքի մեջ էր Նա, սակայն անշուշտ տակավին երկար տարիներ պիտի կարողանար իր աշխատանքը շարունակել, եթե այսքան անսպասելի կերպով Նրա կյանքի թելը չկտրվեր:

Վշտահար սրտով Մենք խնձարհվում ենք Նրա հիշատակի առջև, աղոթում ենք, որ Աստված Նրա հոգին քաղցրությամբ ընդունի և արժանացնի երկնից արքայության և սուրբ Հոգով մխիթարի ձեզ բոլորդ, սիրեցյալ եղբայրներ Մեր և սգակիր ժողովուրդ:

Այժմ, երբ դուք և մենք բոլորս պատրաստվում ենք սուրբ աղոթքներով և երգե-



ԵՐԶԱՆԿԱԿԻՇԱՏԱԿ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԵՓՐԵՄ Բ

րով հողին հանձնել անշնչացած մարմինը Եփրեմ Բ Պատրիարք-կաթողիկոսի, Մենք հավատում ենք նաև, որ Նրա հոգին աներկ-վույթ կերպով բարձրանում է դեպի ավերբը մյուս կյանքի՝ հավիտենական կյանքի, որի հույսով ապրեց ու գործեց մի ամբողջ կյանք հանգուցյալ ձեր Հայրապետը:

Հավերժական լույս և խաղաղություն Նրա հոգվույն:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Դամբանական խոսք են ասում նաև տ. Դավիթ և տ. Պիտրիմ միտրոպոլիտները:

Այնուհետև եկեղեցական հանդիսավոր թափորով հանգուցյալ Ս. Տ. Եփրեմ Բ-ի ա-նյունը հողին է հանձնվում վրաց ա. Սիոն ե-կեղեցում՝ ի շարս վրաց այլ հանգուցյալ կա-թողիկոսների:

Ժամը 19-ին «Իվերիա» հյուրանոցի ճա-շարահում տրվում է պաշտոնական ճաշկե-րույթ, որին մասնակցում են շուրջ երկու հար-յուր հոգի:

Մաշկերույթի ժամանակ տ. Դավիթ միտ-րոպոլիտը ոգեկոչում է կյանքն ու գործը Ս. Տ. Եփրեմ կաթողիկոսի, և բոլոր ներկաները հոտնկալա հարգում են հանգուցյալ Հայրա-պետի հիշատակը:

Մաշկերույթին Վեհափառ Հայրապետը խոսք առնելով մի անգամ ևս Իր հարգանքի տուրքը մատուցեց հանգուցյալ կաթողի-կոսի անձի ու գործունեությանն նկատմամբ և ոգեկոչեց ջերմ խոսքերով Իր եղբայրական սիրո զգացումները հանդեպ լուսահոգի Կա-լիստրատ և Մելքիսեդեկ վրաց կաթողիկոս-ներից, որոնց անձնապես ճանաչելու և բարձրորեն գնահատելու պատեհությունն էր ունեցել:

Վեհափառ Հայրապետը հարագատ ար-տահայտիչը հանդիսացավ համայն հայ հո-գեկորակալության և ժողովրդի՝ Իր ամենա-ջերմ իղձը հայտնելով, որ բոլորս պետք է նաև մեր օրերին ավելի և ավելի ամբաստն-դենք բազմադարյան եղբայրության դաշինքը վրացական և հայկական եկեղեցիների և ժո-ղովուրդների միջև, որը խարսխված է ավելի քան 2000 տարիների անխախտ բարեկամու-թյամբ, ստեղծարար աշխատանքով և մանա-վանդ հանուն քրիստոնեական հավատքի և քաղաքակրթության արժեքների միատեղ պաշտպանության, համախ մեր երկու ժողո-վուրդների ազնվագույն զավակների նահա-տակության գնով:

Իր խոսքը վերջացրեց Վեհափառ Հայրա-պետը, բաժակ առաջարկելով կաթողիկոսա-կան տեղապահ, Նորին Ամենապատվություն Դավիթ միտրոպոլիտի կենացը՝ մաղթելով, որ մոտ ապագային վերանա սգո բողբ վրաց հայրապետական Աթոռի վրայից և վրացա-կան պրավոսլավ պատմական եկեղեցին շա-

րունակի իր սուրբ առաքելությունը իր ժողո-վրդի ծոցի մեջ և միջեկեղեցական միջազ-գային կյանքում:

Ապա երույթ են ունենում ներկաներից շա-տերը:

Ապրիլի 14-ին, ուրբաթ օրը, ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այ-ցելում է տ. Դավիթ միտրոպոլիտին, որն ի պատիվ Հայոց Հայրապետի կազմակերպել էր նախանշաշ, որին ներկա են լինում վրացի և ոռու բարձրաստիճան հոգևորականներ:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Վրացական ՍՍՀ Մի-նիստրների սովետին արևելքեր կրոնական գործերի լիագոր պրն. Դիմիտրի Շալոտաշ-վիլուն:

Հայոց Հայրապետի և պրն. լիագորի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սրտա-գին մթնոլորտում:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այ-ցելում է Թբիլիսիի հայոց ա. Գևորգ եկեղե-ցի, որտեղ Նրան սպասում էր հավատաց-յալների խումներամ բազմությունը: Տեղի է ունենում ժամերգություն, որն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոս-քով:

Ժամը 13.30-ին Թբիլիսիի հայոց առաջ-նորդարանում տեղի է ունենում վրահայոց թեմական խորհրդի նիստը, Վեհափառ Հայ-րապետի նախապատվությամբ:

Ժամը 14.30-ին ամենապատիվ տ. Դավիթ միտրոպոլիտը կազմակերպում է հրաժեշտի ճաշկերույթ, որի ընթացքում բաժակաճառեր են արտասանում ինքը՝ տ. Դավիթ միտրո-պոլիտը, Վեհափառ Հայրապետը, տ. Գայուս Եպիսկոպոսը, տ. Կոմիտաս Եպիսկոպոսը և վրահայոց թեմական խորհրդի նախագահ պրն. Սուրեն Ավչյանը:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ուղևորվում է դեպի ա. Էջմիա-ծին:

Միևնև Վրաստանի սահմանը Հայոց Հայ-րապետին, իր շքախմբով ուղեկցում է տ. Դավիթ միտրոպոլիտը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վե-հափառ Հայրապետը Իր շքախմբով ժամա-նում է Մայր Աթոռ:



Հանգուցյալ Ս. Եփրեմ Բ-ը ծնվել է 1896 թվականին Գորիի շրջանի Դոխի գյուղում, սարկալագի ընտանիքում:

Նա իր սկզբնական կրթությունն ստանում է Գորի քաղաքի հոգևոր ուսումնարանում և այն գերազանց գնահատականներով ավար-տում է 1912 թվականին: Այնուհետև նա ըն-դունվում է Թբիլիսիի հոգևոր սեմինարիան,

որը հաջողությամբ ավարտում է 1918 թվականին: Ապա ընդունվում է Թբիլիսիի նորաբաց համալսարանի պատմական ֆակուլտետը և այն ավարտում 1926 թվականին:

Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո նա ընդունում է հոգևոր կոչում և վերանվանվում Եփրեմ: Շնորհիվ իր նվիրված և ծրագրված գործունեության, նա հինգ տարվա ընթացքում բարձրանում է եպիսկոպոսական աստիճանի:

1945 թվականին Նորին Սրբությունը Ս. Կալիստրատ կաթողիկոսի կողմից ստանում է միտրոպոլիտության աստիճան:

Ս. Կալիստրատ կաթողիկոսի մահից հետո, 1960 թվականի փետրվարի 21-ին, համայն վրաց հավատավոր ժողովուրդը և Վրաստանի եկեղեցական 10-րդ ժողովը Ս. Եփրեմ միտրոպոլիտին միաձայն ընտրում է Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս:

Ս. Եփրեմ Բ-ը որպես ասաջևորդ պաշտո-

նավարել է Վրաստանի գրեթե բոլոր թեմերում և վայելել տեղի հասարակության հարգանքն ու ջերմ սերը:

Հանգուցյալը եղել է Խաղաղության կոմիտեի անդամ, մասնակցել է խաղաղության մի շարք կոնֆերանսների և բազմիցս ելույթ ունեցել: Նա եկեղեցիների միջև էկումենիկ շարժման ջերմ պաշտպան է եղել:

Ս. Եփրեմ Բ-ի գահակալության շրջանում վրաց եկեղեցին սպրում է հոգևոր զարթոնքի մի շրջան:

Բարեկամական ջերմ կապեր էին ստեղծված Ս. Վազգեն Ա, Հայոց Հայրապետի և Ս. Եփրեմ Բ-ի միջև:

Հանգուցյալի եկեղեցաշեն և խաղաղասիրական մեծ գործունեությունը երախտագիտությամբ միշտ կհիշվի:

Ս. ԳԵՎՈՐԳ ՎՐԴ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ





ՄԻ ՊԱՃ ԹԱՂԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑԻՑ



ՀԱ-1595

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Ապրիլի 1-ին, շաբաթ.—Առաջ շաբաթ. Ծրագալույց Ջատկի.

Երեկոյան Մայր տաճարում կատարվում է Ջատկի Ծրագալույցի արարողությունը՝ հանդիսադրությամբ Վեհափառ Հայրապետի, որը և ընթերցում է Արարչագործության պատմությունը Ծնոց գրքից:

Հոգևոր ճեմարանի սաները Ավագ խորանի վրայից ընթերցում են «Դանիել»-ը: Ծրագալույցի և պատարագ է մատուցում տ. Մասիս արդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր յարեալ ի մեռելոց, փեսայն անմահ և երկնատր» բնաբանով:

Հավարտ և պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Ջատկի հախատոնակը և Մայր տաճարի կամարների տակ հնչում է հաղթական «Այսօր յարեալ» հոգեգմայլ շարականը:

Արարողության վերջում Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոքով առաջնորդվում է Վեհարան:

* * *

Ապրիլի 3-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ և պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն անշեցելոց»:

* * *

Ապրիլի 7-ին, ուրբաթ.—Աետումն և Աստուածածնի.

Օրվա տոնի առիթով Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

* * *

Ապրիլի 8-ին, շաբաթ.—Այսօր, Ջատկի արձակուրդներից հետո, վերսկսվում են դասավանդությունները հոգևոր ճեմարանում:

* * *

Ապրիլի 9-ին, կիրակի.—Կրկնագատիկ (Շոր կիրակի).

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:


Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ «ի յիշատակ թիրաւոր նահատակացն մերոց համաշխարհային Առաջին և Երկրորդ պատերազմաց»:

* * *

Ապրիլի 14-ին, ուրբաթ.—Այսօր երեկոյան հոգևոր ճեմարանում հետաքրքիր դասախոսություն է կարդում տ. Աղան վրդ. Բալիոզյանը՝ «Երուսաղեմը և տեղի հայկական պատրիարքությունը» թեմայով:

Դասախոս հայր սուրբը պատասխանում է նաև ուսանողության հարցերին:



* * *

Ապրիլի 16-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակե).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ադան վրդ. Բալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ահաաաիկ դնեմ ի Սիրվն վէմ ընտիր... Որ ի նա հաատաւացէ մի ամաշեացէ» բնաբանով:

* * *

Ապրիլի 22-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին են այցելում արգենտինահայ հայտնի երաժիշտ Ալիսա Թերզյանը և հյուրախաղերով Հայաստանում գտնվող արգենտինացի սիրված կինոդերասանուհի և հանրածանոթ երգչուհի Լոլիտա Թորեսը՝ իր նվագախմբի անդամների հետ:

Հարգելի արվեստագետներին ողջեցում էր արգենտինահայ ծանոթ ազգային պրն. Տիգրան Մյուրաքյանը:

Հայոց Հայրապետի, օրհորդ Ալիսա Թերզյանի, Լոլիտա Թորեսի և մյուս արվեստագետների միջև տեղի է ունենում ջերմ գրույց, սրտագին մթնոլորտում՝ հայ և արգենտինյան ժողովուրդների և մշակույթների վերաբերյալ մի շարք կարևոր ու հետաքրքիր հարցերի շուրջ:

Հաջորդ օրերին Վեհափառ Հայրապետը Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում բարեհաճում է ներկա լինել Ալիսա Թերզյանի և Լոլիտա Թորեսի համերգներին:

* * *

Ապրիլի 28-ին, կիրակի.—Կարմիր կիրակե.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս արդ. Գալստյանը և քարոզում «Նախանձ տան քո կերիցէ զիս» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 24-ին, երկուշաբթի.—Ցիշատակ բիրաւոր նահատակացն մերոց, որք կատա-

րեցան լընթացս համաշխարհային Առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 57-րդ տարեդարձի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ադան վրդ. Բալիոզյանը:

Ս. պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Ներկա էին նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուխտավորներ և հավատացյալների հոծ բազմություն:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Գեվորգ վրդ. Սերայդարյանը՝ «Ահաաաիկ ես բացից զգերեզմանս ձեր, և հանեց զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ... Եւ տաց զոգի իմ ի ձեզ, և լինիջիք կենդանի, և եղից զձեզ յերկրին ձերում» Եզեկիելյան բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր տաճարի հյուսիսային կողմում կանգնեցված Եղեռնի նահատակաց հուշարձանի առջև կատարվում է հոգեհանգստյան արարողություն:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Ծիծեռնակաբերդ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու մեր նահատակների անմահ հիշատակին:

* * *

Ապրիլի 27-ին, հինգշաբթի.—Հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում միաբանության, ուսանողության և պաշտոնեության համար պրոֆ. Սուրեն Զոհրաբյանը կարդում է իր երկրորդ բովանդակակալից դասախոսությունը «Ուղեղի և ներվային դրության մասին» թեմայով:

Դասախոսությանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:


* * *

Ապրիլի 30-ին, կիրակի.—Տօն երևման ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Մելքունի հոգևոր հովիվ տ. Ոսկան Ծ. վրդ. Գալբակյանը:





ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Արդեն ավանդույթ են դարձել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպվող գրական-գեղարվեստական հավաքույթները, հանդեսներն ու զրույցները, որոնք նպատակ ունեն ճեմարանի ուսանողության մեջ զարգացնել գեղագիտական ճաշակ և արվեստի իսկական ճանաչողություն:

Մարտի 25-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց արահուստ տեղի ունեցավ գրական-գեղարվեստական հանդես՝ կազմակերպված ճեմարանի սաների ուժերով:

Հանդեսին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց ստաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը և շատ հյուրեր:

Տերմինական աղոթքից հետո հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարտիկյանը ներածական խոսքով բացում է հանդեսը: Այս ելույթ են ունենում ճեմարանի սաները՝ հանդիսականներին ներկայացնելով մեծ մասամբ իրենց ստեղծագործությունները:

Բ լսարանի սան Սամվել արկ. Պետրոսյա-

նը կարդում է Տաթևի վանքի և նրա դպրոցի գործունեության մասին գրած իր շարադրությունը՝ մատենագրական մեջբերումներ կատարելով հայ պատմիչներից:

Իրենց բանաստեղծությունների ընթերցումներով և այլ արտասանություններով հանդես են գալիս՝ Ա լսարանի սան Գրիգոր Քեշիշյանը՝ «Ճառագայթներ եմ որսում» (ինքնագիր), Գ դասարանի սան Սարգիս Կյուսամանկյանը՝ «Կոմիտաս» (Սողոմոն Տարոնցի), Բ լսարանի սան Ավետիք արկ. Արաբաջյանը՝ «Սպիտակ բանաստեղծություն» (ինքնագիր), նույն լսարանի սաներ Հակոբ արկ. Խաչատրյանը՝ «Ես իմ անուշ Հայաստանի» (Եղիշե Զարեհ), Նորայր Ավագյանը՝ «Մայրդ» (ինքնագիր), Ա լսարանի սան Վաչե Նալբանդյանը՝ «Ուտի կուգաս» (Մայրթ-Նովա), և Ա դասարանի սան Լևոն Բաղդասարյանը՝ «Ուղտի պարը» (Արշավիր Դարբնի):

Իրենց ստեղծագործական շարադրություններն են կարդում Բ դասարանի սաներ Ադասի Բաբուջյանը՝ «Հիշողություններ ամսուվա օրերից», և Օճիկ Ալոյանը՝ «Չախորդ ձկնորսություն»:

Երածշտակյան իրենց ինքնուրույն ստեղծագործությունների կատարումով հանդես են գալիս Գ դասարանի սան Կիրակոս Հովհաննիսյանը՝ «Հալկական պար», և Ա լսարանի սան Հրանտ Աղաջանյանը՝ «Սիրեցեք զմի-

մեան» (խոսք՝ Պետրոս Գորյանի): Ա լսարանի սան Ավետիս Արթինյանը դաշնամուրի վրա կատարում է Ի. Ս. Բախի «Երրորդ հսիերգանք»-ը:

Ճեմարանի երգչախումբը, եվրոպական երաժշտության դասատու Խորեն Մելիսանեջյանի ղեկավարությամբ, կատարում է «Հոյնար», «Երևան բաղ եմ արել» և «Ազգ փառասպանձ» խմբերգերը:

Հանդեսի վերջում ելույթ է ունենում Ճեմարանի ջազային նվագախումբը՝ տ. Մասիս արեղա Գալստյանի ղեկավարությամբ: Խումբը կատարում է մի շարք երգեր՝ «Ծիծեռնակ», «Այազյազ», «Հայաստան» և այլն: Մեներգերը կատարում են տ. Մասիս արեղա Գալստյանը և Ա լսարանի սան Գրիգոր Քեչիշյանը:

Այնուհետև Բ լսարանի սան Վրեժ արկ. Նաջարյանը կարդում է ուսանողների կողմից Վեհափառ Հայրապետին ուղղված չափածո ուղերձը (սույն մեկ էջանոց ուղերձը նկարագարդել է Ա լսարանի սան Գևորգ Առաքելյանը):

Երեկոյից ստացած իր տպավորությունների մասին խոսում է գեր. տ. Բարգեն արքեպ. Ապատյանը.

«Ծրագրի գեղեցիկ գործադրությունը՝ բանաստեղծություն, երգ, երաժշտություն, մեր սիրտը լեցուց հույսով, սիրով ու հավատով:

Այս խումբ մը պատանիները մեզի վստահություն ներշնչեցին, որ իրենք իդեալի մը նըվիրվելու համար եկած են այստեղ: Մենք սիրեցինք այս ուսանողությունը: Իրենց բայլը դեռ դողող է, բայց հետո խիզախ պիտի դառնա՝ Վեհափառի շունչին ներքո: Մեր հոգին լույսով լեցվեցավ: Մտքով վերադարձանք մեր անցյալին, մեր ուսանողական տարիներին, տեսանք մեր աչքերով ներկա իբրև գեղեցիկ, վերածնված հայրենիք մը, ժողովուրդ մը: Երջանիկ եք, որ կարիք այս գեղեցիկ իրականությունը՝ գեղեցիկ հայրենիք, բարեկարգ ս. Էջմիածին: Երկար ապրիք, հաջողիք ձեր ասպարեզին մեջ, ժրջան, կարգապահ լինիք, պարծանքը լինիք մեր փառասպանձ ժողովուրդին և եկեղեցիին»:

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնության խոսք է ասում և տ. Բարգեն արքեպ. Ապատյանին ներկայացնում Ճեմարանի ուսանողությանը՝ որպես տիպար հոգևորականի՝ պատվիրելով հետևել նրա կյանքին ու գործունեությանը:

Այս հանելի երեկույթը ավարտվում է Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությամբ և խմբովին երգված Տերմնական աղոթքով:

ԱՎԵՏԻՔ ՍՐԿ. ԱՐԱԲԱԶՅԱՆ





ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Այս տարի լրանում է Մայր Աթոռի տպարանի հիմնադրության 200-ամյակը:

Վեհափստ Հայրապետի հունվար 28 կոնդակով 1972 թվականը հայտարարվել է հոբելյանական տարի:

1771 թվականին, մեծագործ Սիմեոն կաթողիկոս Երևանցու օրով (1763—1780), Մայր Աթոռում բացվում էր ողջ Հայաստանում առաջին տպարանը, որը մշակութային նշանակալից իրադարձություն էր հայ ժողովրդի պատմության մեջ, որպես Սահակ-Մեսրոպյան հոգևոր, մշակութային և հայրենասիրական գործի շարունակությունը տպագրության միջոցով:

Մայր Աթոռի տպարանը «Աստուծով հաստատեցաւ նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին, ամենայն պարագայիս, հոգարարութեամբ Տեառն Սիմեոնի Սրբազան կաթողիկոսին Երևանցոյ, արդեամբ ջողայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաշանեան, որ մականուամբ Զաքիկեց, ի յիշատակ իրեան և իր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն»:

Մայր Աթոռի տպարանը գործում է առանց ընդհատման մինչև 1919 թվականը:

Մայր Աթոռի տպարանի 200-ամյակի առիթով «Էջմիածին» ամսագրում հրատարակում ենք Մայր Աթոռի միաբան տ. Արտակ եպս. Սմբատյանցի (Տավուշեցի) արժեքավոր անտիպ մի ուսումնասիրությունը, որը կոչվում է

**«Սուրբ Էջմիածնի միաբանության
Գրական-կրթական գործունեությունը
և**

Մայր Աթոռի տպարանը

1512—չորս հարյուրամյակ հայ տպագրության—1912»:

Սույն երկասիրությունը հեղինակը ձոնել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյա հոբելյանին:

Վերոհիշյալ ուսումնասիրությունը, որը հեղինակը ավարտել է 1934 թվականին, գտնվում է Երևանի Մաշտոցյան ձեռագրաց Մատենադարանի դիվանային բաժնում, Տ. Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 1բ:

Ուսումնասիրությունը, որը բաղկացած է 178 մեծադիր, ձեռագիր էջերից, ունի հետևյալ բաժինները.

ա) Հատաչաբան, բ) Աղբյուրներ, գ) Ներածություն (Ա.—ԺԳ մաս կամ գլուխ):

Սույն ուսումնասիրությունը հրատարակության են պատրաստել և խմբագրել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը:

Հրատարակվող բնագիրը համեմատվել է հեղինակի ձեռագրի հետ. ուշտվել են նրա օգտագործած աղբյուրներից և գրականությունից կատարած մեջբերումները: Վերջում տրվելու են հրատարակիչների ծանոթագրություններն ու նշումները: Ելնելով հեղինակի ցանկությունից, ավելացվել են համապատասխան նկարներ, հայ տպագրության վերաբերյալ:

Սույն աշխատության բաղկացուցիչ երկրորդ մասը, որը կրում է «Գրացուցակ Էջմիածնի տպարանից լույս տեսած գործերի», առաջիկայում հրատարակվելու է «Էջմիածին» ամսագրի էջերում, անհրաժեշտ հավելումներով հանդերձ: Վերոհիշյալ աշխատությունն էլ պահվում է Մատենադարանի դիվանային բաժնի նույն արխիվում:

Մայր Աթոռի միաբան տ. Արտակ եպս. Սմբատյանցը ծնվել է 1876 թվականին Հայաստանի Տավուշ (այժմ Թուրուզ) գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Գևորգյան ճեմարանում: 1902 թվականին, Խրիմյանի օրով, վարդապետ է ձեռնադրվել և կատարել՝ Մայր Աթոռում և թեմերում պատասխանատու վանական-վարչական, թեմական պաշտոններ, Քիչնևում, Ծիրակի և Սյունյաց թեմերում:

1904 թվականից ի վեր աշխատակցել է «Արարատ» ամսագրին, ուր հանդես է եկել ինքնուրույն քարոզներով, ուսումնասիրություններով և ռուսերենից ու գերմաներենից կատարած կրոնական, քարոզչական, դավանաբանական գործերի թարգմանությամբ:

1922 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվել և նշանակվել Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

Տ. Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի գրչին են պատկանում.

1. Պրոֆ. Ն. Սագարդա, «Հույն-արևելքի հին-եկեղեցական աստվածաբանական գիտությունը իր ծաղկման շրջանում (Դ.—Ե դարեր), նրա գլխավոր ուղղությունները և բնորոշ հատկությունները» («Արարատ», 1910, էջ 539—

707). լույս է տեսել նաև առանձին գրքուկով, թարգմանվել է ռուսերենից: 1910, 77 էջ:

2. Ամենագեղեցիկ բանը կյանքում, հեղինակ Հենրի Դրյումմոնդի, թարգմանություն գերմաներենից, 1911, 36 էջ:


3. Եկեղեցու պատմությունը տիեզերական ժողովների շրջանում, Վադարշապատ, 1911, գործ՝ պրոֆ. Վ. Վ. Բոլոտովի, թարգմանություն ռուսերենից, 1914, 201 էջ:


4. Համառոտ պատմություն Տաթևի վանքի, «Տաթև» տարեգիրք, 2 տարի, 1930, Հայեա, էջ 227—357 (պատկերագրող):

5. Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, 178 մեծադիր էջ, ձեռագիր, հրատարակվում է «Էջմիածին» ամսագրում:

6. Գրացուցակ, Էջմիածնի տպարանից լույս տեսած գործերի (անտիպ):

ՍՈՒՐԵՆ ՔՈՒԱՆՋՅԱՆ
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ





**ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԸ**

1512—Չորս հարյուրամյակ հայ տպագրության—1912

Ի ՀԻՇԱՏԱԿ

435—ՀՈՒՅԵԼԵՆԱԿԱՆ ՏԱՐՎՈ—1935

ԺԵ ԴԱՐԱԴԱՐՁԻ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԻ

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

**Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ե Ց
ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ
(Տավուշեցի)
ՄԻԱԲԱՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
1934 ԱՄԻ**

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հրատարակելով սույն աշխատությունը մեր նպատակն է եղել ըստ հնա-
րավորության ամփոփ կերպով հրապարակի վերա դնել ս. Էջմիածնի միաբա-
նության գրական-կրթական գործունեության պատկերը տպագրության գյու-
տից սկսած:

Պատմության ու գրականության մեջ ս. Էջմիածնի միաբանության ունե-
ցած գրական գործունեության մասին շատ քիչ է գրվել: Դարերի ընթացքում
այդ միաբանության կատարած աշխատանքը թանձր քողով ծածկված է մնա-
ցել: Ուստի և ս. Էջմիածնի միաբանության ցուցադրած գրական-կրթական
գործունեությունը ճշմարտապես գնահատելու համար կարևոր է ի նկատի
ունենալ հետևյալ հանգամանքները.

Նախ Հայաստանը Մայր Աթոռով հանդերձ շարունակ եղել է ասպատա-
կության և կողոպուտի ենթակա: ԺԹ դարի առաջին քառորդին ուսման

Կովկասին տիրելու միայն մեր երկիրը ևս խաղաղվեց ու ժողովուրդը ազատ շունչ քաշել սկսեց: Էջմիածինը միշտ հեծել է պարտքի տակ, և կաթողիկոսներն ու միաբանության անդամները ժամանակի տիրող իշխանությանց կողմից իրենց վերա դրված հարկերի երեսից շատ անգամ ստիպված են եղել թողնել վանքը և փախչելով՝ թաքնվել, իրենց գլուխն ազատելու համար:

Ա. Էջմիածնի Մ. Բարսեղյան քանդակ

Քրիստոս-Կրթական

Քրիստոս Էջմիածնի

Մայր և զավակներ
 Կոնստանդնուպոլիսի Մայր և զավակներ

1572 = Հարս Երեզնի անձր = 1912 (1920).

435 = Հարս Երեզնի անձր = 1935

Մարտի 16-ին լույս է հանում:

Մշակույթ և արվեստ

Մարտի 16-ին լույս է հանում:

(Մարտի 16-ին)

Մարտի 16-ին լույս է հանում:

1934 թ.

Հեղինակի ձեռագիրը

Հայտնի է, որ ս. Էջմիածնի վանքը ձեռագրերի և հազվագյուտ հնությունների մի անգնահատելի գանձարան է ներկայացնում: Սակայն ս. Էջմիածնի դարերի ընթացքում քանի-քանի անգամ ենթարկվել է ասպատակությունների և հարստահարությանց. գերի են տարվել կաթողիկոսներ, եպիսկոպոսներ: Կողոպտվել է վանքի հարստությունը և ոչնչացվել են շատ ձեռագիրներ ու հնություններ: Եթե այս դատն հանգամանքները տեղի ունեցած չլիներին, Էջմիածին, իբրև հազար վեց հարյուր տարուց ավելի գոյություն ունեցող մի հաստատություն, պետք է այսօր աշխարհի երեսին հայության մեջ ամենամեծ հարուստ հաստատությունը լիներ:

Երկրորդ. հայ ժողովուրդը դարերի ընթացքում շատ դժբախտ վիճակ է ունեցել: Հայաստանի աշխարհագրական դիրքը խիստ աննպաստ է եղել Եվրոպայից որևէ լուսավորություն ընդունելուն: Կղզիացած հայ ժողովուրդն յուր չորս կողմը միայն յոշնամի և անկուտուր տարրեր է ունեցել: Այսպիսի միջավայ-

րում, պարզ է, խավարը պիտի թագավորներ և Մայր Աթոռն էլ գրկված պիտի լինէր կարող ու գործունէա անհատներ հանդես բերելուց:

Մի երկիր, ուր կյանքի ու մահվան կոիվ է մղվել դարերի ընթացքում, ուր ծնողը յուր սիրասուն գավակի առևանգիլը կամ սրախողխող լինելն էր տեսնում յուր աչքի առաջ, ուր կյանքի ու գույքի ապահովություն չկար, ուր բարը բարի վերա կանգուն չէր մնում. այդ տեսակ երկիրն անընդունակ պետք է լինէր Գյուտտենբերգի գյուտը իսկույն յուր մեջ հյուրընկալելու և ծաղկեցնելու: Քաղաքական աննպաստ հանգամանքները այդ ուղղությամբ եղած որևէ ձգտումի պետք է արգելք հանդիսանային:

Այսպիսի ծանր պայմանների մեջ ապրող Մայր Աթոռն ու ս. Էջմիածնի սիաբանությունը բնականաբար պիտի պահ մի մոռացության տար յուր սըրբազան պարտքը: Թեև Էջմիածնում վանական դպրոցն, իսկ ԺԸ դարից էլ Էջմիածնի տպարանը շարունակել են իրենց գոյությունը, սակայն սրի ու կրակի մեջ հնարավոր չէր լինիլ հանդես բերել կարող անհատներ, ծաղկեցնել գիրն ու գրականություն, և շահավետ կերպով օգտագործել Գյուտտենբերգի գյուտը*:

Երրորդ. ս. Էջմիածնի սիաբանության անդամների իսկական պարտավորությունը դարերից ի վեր եղել է գլխավորապես վարչական պաշտոններ կատարելը: Հայի արյունոտ օրերում, նորա թշվառության ժամերին, նորա ցավերին վշտակից ու սփոփիչ և ուրախ օրերին էլ նորա խնդությանը մասնակից եղել է հայ հոգևորականը:

ԺԹ դարի վերջին շրջանից սկսած ս. Էջմիածինն ունեցել է և ունի շատ կարող անձինք, սիաբաններ միջնակարգ և համալսարանական կրթությամբ օժտված: Հետևապես պիտի սպասվեր, որ սիաբանությունը ավելի արդյունք տալ կարողանար: Սակայն վարչատնտեսական զանազան պաշտոններ իլում էին կարող անհատներից նրանց թանկագին ժամերը, կանգնեցնում գիտությամբ զբաղվող նրանց մտքի թափը:

Ուստի, չնայած որոշ չափով այն բարեբաստիկ հանգամանքներին, որոնց մեջ, մինչև համաեվրոպական մեծ պատերազմը, գտնվում էր վանքի տպարանն ու ս. Էջմիածնի սիաբանությունը, վերջինս համեմատական չափով դարձյալ քիչ է տվել գիտությանն ու գրականությանը այն, ինչ իրոք կարող էր տալ, եթե վարչական ծանր պաշտոնները չլինեին:

Չնայած այս դառն խոստովանության, այդ տիրող խավարի մեջ անգամ այնուամենայնիվ դարձյալ ս. Էջմիածնի կաթողիկոսներն ու սիաբանության անդամներն են անսպառ ջանքեր գործ դնում, նախ՝ Եվրոպայում տպարան-

* Չնայած այդ աղետալի դրության և շրջապատի աննպաստ հանգամանքներին, Էջմիածնի վարժարանը երբեմն խիստ աչքի ընկնող տեղ է բռնել յուր ուսումնասեր վարդապետներով: Ստեփաննոս Լեհացին յուր մի թարգմանության (Դիոնիսիոսի Արիստագացվույն գրքերը) հիշատակարանի մեջ Էջմիածնի ուսումնարանի վերա խոսելով՝ ասում է. «Ջայնու ժամանակա բազում էին երևելի վարդապետք (Մէջմիածին) քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոցք քաջք, գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ գծամանկագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցիկ յարմար բանի դրոշմեալ»: (Հ. Գ. Զարբհանայան, Պատմություն հայերեն դպրության, Բ, Վեներտիկ, 1878, 172 էջ:

Հետագա ճնշումների դարերը մասամբ իսպառ մոռացնել են տալիս Լեհացու նկարագրած՝ «գիտուն», «քաջաբան» և այլն վարդապետներին, ինչպես նաև հետևորդ սերունդների մեջ աչքի ընկնող հոգևորականների անունները: Անաչառ դիտողի և քննադատի համար այդ հանգամանքը անբնական երևույթ չի լինելու:



Տ. Արտակ եպիսկոպոս Սմբատյանց

ներ պահելու և ապա, վերջ ի վերջո, ամբողջ հայկական մասշտաբով վերցըրած, առաջին անգամ Գլուտոտեներգի գլուտը Էջմիածնում հաստատելու:

*
* *

Ա. Էջմիածնի միաբանությունը շատ անգամ անարդարացի կերպով համեմատվել է Վենետիկի Մխիթարյան հայրերի հետ: Այդ պատճառով խիստ հարձակողական և մինչև իսկ անպատվության հասնող հողվածներ էին լույս

տեսնում մեր պարբերական մամուլում ժԹ դարի վերջերին⁶: Այդ եղել է հետեվանք, հավանականորեն այն բանի, որ համեմատողները աչքի առաջ չեն ունեցել, թե ս. Էջմիածնի միաբանության անդամների բուն պարտականության մեջ մտել է առավելապես վարչական պաշտոններ կատարելը: Գրականությանը և գիտությանը զբաղվելուն նա ստիպված է եղել երկրորդական տեղ տալ և վարչական ծամերից հետո ազատ ժամերը միայն նորան նվիրել: Մինչդեռ Վեներտիկի Մխիթարյան հայրերը կազմել և հաստատել են իրենց եղբայրությունը մի որոշ նպատակով—այն է՝ պարսպել միայն և միայն գիտությանը և նրանք հաստատվելով Եվրոպայում և որ գլխավորն է ապահովելով իրենց տնտեսապես և քաղաքականապես, նվիրվել են միմիայն գիտության, օգտվելով Եվրոպայի մտավոր առաջադիմությունից, հեռու և ազատ մնալով Ասիայի բարբարոս ցեղերի ասպատակություններից և կոտորածներից:

Ուստի և՛ ոչ թե դատապարտել, այլ զարմանալ պետք է, որ Մայր Աթոռի միաբանությունը յուր վարչական ծանր պարտականությունները կատարելուց հետո, դեռևս ժամանակ է գտել սրի ու կրակի մեջ անգամ հետաքրքրվելու և գրականությանը զբաղվելու: Եվ այսօր գրական աշխարհի առաջ կարող է կանգնել նա յուր համեստ, բայց պատկառելի գործունեությանը և գրականությանն յուրովսանն մատուցած արդյունքով, որը և արձանագրելու ձեռնարկած է նվաստ:

*
* *

Այստեղ շատ հարմար է մեջ բերել Ստեփաննոս Նազարյանի՝ 1846 թվին «Հայ—պարսկական դպրության» մագիստրոսի աստիճան ստանալու համար Կազանի համալսարանին ներկայացրած դիսերտացիայից այն կտորը, որը վերաբերում է Վեներտիկի Մխիթարյան հայրերին և ս. Էջմիածնի միաբանությանը:

Խոսելով Մխիթար աբբայի և Մխիթարյանների կատարած աշխատանքի մասին, Նազարյանը ամեն անգամ հիշատակում է նոցա մի առանձին հիացմունքով:

«Հայկական գրականության պատմությունը,—գրում է նա,—պիտի նայել Մխիթարյան միաբանության որպես մի գիտական ակադեմիայի, որի անդամները, ինչպես տրամադրում էին սահմանված կարգերը, պարտավոր էին զբաղվել գիտությունները մշակելով^{**}. փոխադարձաբար հաղորդելով միմյանց իրանց հետազոտությունների արդյունքը: Մխիթարյանների ակադեմիայի երևան գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանավոր դեպքն է: Հայ ժողովուրդը մինչև այդ ընկղմված էր խորին տգիտության մեջ, իսկ նորա լեզուն՝ կատարյալ բարբարոսական դրության մեջ: Մխիթարը իր միաբանությանն էին ներկայացրած մի անխորտակելի պատվար կանգնեցրեց գրական խանգարման աստիկ հեղեղումների դեմ^{***}»:

Ահա թե ինչպես է ճշգրիտ կերպով բնորոշում Նազարյանը Մխիթարյան միաբանության նշանակությունը և թե նոցանից ի՞նչ կարելի է սպասել: Այո, Մխիթարյան միաբանությունը իրոք ամեն բանով ապահովված մի գիտա-


⁶ Տես «Մշակ»-ի համարները յուր հրատարակության օրից սկսած, մանավանդ տարվերջին. Ա. Ե. Ա.:

^{**} Այս և հաջորդ բոլոր ընդգծումները մերն են. Ա. Ե. Ա.:

^{***} Լեո, Ստեփաննոս Նազարյանց, Ա, Թիֆլիս, 1902, էջ 132—133:



Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը
(Գործ Գրիգոր Ահարոնյանի)



Մի էջ Հակոբ Մեղապարտի Պարգատումարից (1512 թ.)

կան ակադեմիա էր, որի անդամները պարտավոր էին զբաղվել գիտությունները մշակելով միայն, ուրիշ պարտավորություն չունեին:

Իսկ ի՞նչ դրության մեջ էին ռուսահայերը այդ ժամանակ, ինչ կարելի էր սպասել սորանցից: Նազարյանը այստեղ հայությունը գովասանել չի կարող. Մխիթարյաններին գովաբանելու առիթ տվող բարեբաստիկ հանգամանքներն այստեղ բացակայում են: Ռուսահայերի գրականությունը գուրկ է մեծ արդյունքներ ցուցադրելուց: Եվ ռուսահայերի այս բացասական կողմը բացատրելու համար բավական է համարում Նազարյանը հենց վերցնել բացատրել էջմիածնի վանքի դրությունը: Որովհետև, ումնից ազգն ավելի իրավունք ուներ սպասելու և պահանջելու լեզվի ու գրականության ծաղկումն ու մշակությունը, եթե ոչ միայն համայն հայ եկեղեցու վարչական կենտրոններկայացնող Մայր Աթոռ ս. Էջմիածնից, որի միաբանությունը Մխիթարյանների օրինակով, գոնե պետք է առաջ բերեր ստեղծագործող ույժ, մտքի կորույ ու թափ:

Սակայն, Նազարյանը, իբրև խորթափանց հեռատես մի անձն, բոլոր հանգամանքները կշռելով կրակի այն բովն ու բոցը, որի միջով անցել էր հայը և էջմիածնի միաբանությունը, արդարության և ժարի թաթերի վրա դնելով, ճշգրիտ կերպով բնորոշում է ժամանակը և պահանջի չափը, որ պիտի արվի էջմիածնի միաբանությունից:

Ահա թե ինչ է ասում նա նույն շարադրության մեջ.

«Էջմիածնի վանքի վարդապետների գրական գործունեությունը քիչ մխիթարական է: Այս երևույթը, որ կարող է միակողմանի, հետևաբար և անարդար դիտողին թույլ տալ անպայման կերպով դատապարտել այդ վարդապետներին, արդարացուցիչ պատճառներ է գտնում այն բազմատեսակ թշվառությունների մեջ, որոնք այնքան դարերի ընթացքում ծանրացած էին այս նախաթոռ վանքի վրա:



Մի էջ Հակոբ Մեղսպարտի Ուրբաթագրքից (1512—1513 թթ.)

«Մի ժողովրդի մեջ, որի պատմական բոլոր հիշողությունները, հոգևոր բարոյական ամբողջ գիտակցությունը, բացի կրոնից և լոկ ֆիզիկական գոյությունից, խեղդված էին և պիտի խեղդվեին ասիական բռնապետության ճնշող լուծի տակ,—այդպիսի մի ժողովրդի մեջ մենք իրավունք չունենք ենթադրելու մի րուպեական ծաղկման հնարավորություն: Չկան թոնչքներ, ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր աշխարհում: Ամեն ինչ հետևում է անհրաժեշտ հաջորդականության օրենքին, ամեն նոր զարգացում ժամանակ է պահանջում, և այսպես ասած, բարեբաստիկ հանգամանքների շունչ»*:

Ահա Մխիթարյան գիտական ակադեմիայի և ս. Էջմիածնի միաբանության ճիշտ գնահատականը այն մեծ մարդու, Ստեփաննոս Նազարյանի, որ ԺԹ դարի վերջերին Մայր Աթոռի և միաբանության դեմ հայ մամուլի մեջ սկսված արշավանքից ուղիղ հիսուն տարի առաջ տվել էր նա:

* * *

Ամենքի համար շատ պարզ է, թե ինչպիսի ծանր և պատասխանատու աշխատանքի են ձևոնարկել: Ծանր են ասում, որովհետև չկա մի գրադարան, մատենադարան, մի գրացուցակ, որ լրիվ լուր մեջ պարունակեր բոլոր այն գրքերը, որ հրատարակել են ս. Էջմիածնի միաբանները և կամ լույս են տեսել Էջմիածնի անվամբ պահված տպարաններում:

Ուստի Մայր Աթոռի, Գևորգյան հոգևոր ձեռնարանի, Սևանի մենաստանի մատենադարանները, Երևանի թեմական դպրանոցի, Կ. Հ. Բարեգործական ընկերության, Ազգագրական ընկերության, Ներսիսյան ազգային դպրանոցի, Բաբվի Մարդասիրական ընկերության գրադարանները, ինչպես նաև

* Լեո, Ստեփաննոս Նազարյանց, Ա., Թիֆլիս, 1902, էջ 136:



Մի էջ Հակոբ Մեղապարտի Տաղարանից (1512—1513 թթ.)

Խորհրդային Հայաստանի Երևանի Հանրային գրադարանի գրացուցակը մի քանի անգամ անձամբ աչքի անցկացնելուց հետո, ստիպված եմ եղել քրքրել նաև շատ մասնավոր անձանց գրադարանները, որտեղ բազմաթիվ հրատարակություններ եմ գտել, որոնցից ոչ մեկը չկա և ոչ մի գրացուցակում: Նույնիսկ Հ. Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտության» մեջ, որի միայն Ա հատորն է ստացված մեզանում, չկան և. Էջմիածնի տպարանի բոլոր հրատարակությունները:

Այլև շրջել եմ Նոր Բայազետի, Աղեքսանդրապոլի (այժմ Ծիրակի թեմ), Կարսի շրջանի, Սյունյաց թեմի, մասամբ Արարատյան թեմի, Վրաստանի և Իմերեթի թեմի հայկական գյուղերը, որտեղ եկեղեցիներում Էջմիածնի տպարաններից լույս տեսած հին-հին հրատարակություններ եմ գտել: Ստացել եմ նաև Էջմիածնատիպ գրքերի վերաբերյալ ցուցակներ և հարկավոր տեղեկություններ Ծուշվո թեմական և Նոր Նախիջևանի թեմական դպրոցների, Լազարյան ճեմարանի, Երուսաղեմի և Հակոբյանց վանքի և այլ հաստատությունների գրադարաններում եղած գրքերի վերաբերյալ*:

Սույն աշխատության մեջ մտել եմ.

Նախ. բոլոր այն գրքերը, ինքնուրույն թե թարգմանական, որ հրատարակել են Էջմիածնի միաբան** կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, սարկավագ՝ անդամները Մայր Աթոռի տպարանում: Առաջ են բերված նաև նրանց գրած ու տպած հոդվածները զանազան պարբերական ամսագրերում:

* Պակասում են տեղեկություններ Վիեննայի Մխիթարյանց հայրերի գրադարանում եղած գրքերի մասին, որն ստանալը հնարավոր չեղավ:

** Միաբան համարել եմ Էջմիածնի բուն միաբաններին, իսկ տանկահայ եպիսկոպոսները, որոնք միայն ձևնադրությամբ են Էջմիածնի միաբան համարվում, նրա ի նկատի չեն առնված: Ծան. Ա. Ե. Ա.:

Երկրորդ. բերված են ս. Էջմիածնի միաբանության անդամների հրատարակությունները դրսի այլ և այլ քաղաքներում:

Երրորդ. բերված են ս. Էջմիածնի անվամբ Եվրոպայի զանազան քաղաքներում պահված տպարանների հրատարակությունները:

Չորրորդ. բերված են ս. Էջմիածնի, ինչպես նաև արտասահմանում վանքի անվամբ պահված տպարաններում աշխարհական անձանց կատարած հրատարակությունները:

Հինգերորդ. կաթոլիկությունից հայ առաքելական եկեղեցու գիրքը դարձած վարդապետների աշխատությանց շարքը բերված է լրիվ՝ նոցա գրական գործունեության ամփոփ պատկերը տալու համար:

*
* *

Սույն աշխատությունը, իբրև առաջին փորձ, բնական է, շատ թերություններ պետք է ունենա: Համոզված եմ, որ կգտնվեն դեռևս շատ հրատարակություններ, որոնք տեղ պիտի գտնեին այստեղ, սակայն այժմ պակասում են: Ուստի խորին շնորհակալությունս պիտի հայտնեմ այն հաստատություններին և մասնավոր անձանց, որոնց ձեռքի տակ եղած գրադարաններում՝ եթե գտնվին ցուցակիցս դուրս մնացած գրքեր, այդպիսիների մասին հարկավոր տեղեկություններ կհաղորդեմ¹:

Խորին շնորհակալությունս եմ հայտնում նաև այն բոլոր հոգևոր և թե աշխարհական անձանց և հաստատություններին, որոնք սույն աշխատության վերաբերյալ իրենց աջակցությունը շնորհեցին և հարկավոր տեղեկություններ հաղորդեցին:

Արտակ եպիսկոպոս Սմբատյանց
(Տավուշեցի)

*
* *

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ


1. Հ. Գ. Զարբհանայան. Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883:
2. Հ. Ա. Ղազիկյան. Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի: Ա. պր. Վենետիկ, 1909:
3. Վինենայի Մխիթարյան միաբանության գրատան ցուցակը:
4. Հովհաննես եպս. Ծախյաթունյան. Ստորագրութիւն Կաթողիկէ ս. Էջմիածնի և հինգ զաւտացն Արարատայ, հատ. Ա, Բ, 1842, Էջմիածին:
5. Հարություն Թ. Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան. հատ. Բ, Նոր Զուղա, 1881:
6. Հովհաննես քհն. Մկրյան. Կենսագրութիւն Մեսրոպայ Դավթեան Թաղիադեանց, Թիֆլիս, 1886:
7. Գլուտ ա. քհն. Աղանյան. Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, ԾԱ, Թիֆլիս, 1892—1913:

¹ Խմբագրական ծանոթագրությունները տրվելու են սույն աշխատության վերջում հերթական համարակալությամբ:



Մի էջ Հակոբ Մեղապարտի Աղթարքից (1512—1518 թթ.)

8. Գյուտ ա. քհն. Աղանյան. Դիան, գիրք Ժ, Մանր մատենագիրք. ԺԵ—ԺԹ դար, Թիֆլիս, 1912:
9. Հ. Մ. Չամչյան. Պատմություն Հայոց. հատ. Գ, Վենետիկ, 1786:
10. Սիմեոն կաթողիկոս. Ջամբո. Վաղարշապատ, 1873:
11. Ստեր Մագիստրոս Մտերյան. Պատմություն կաթողիկոսացն Էջմիածնի ի Սիմեոնե մինչ ցՅովհաննես Ը-րդ ամբ տեսոն 1763—1831 Մոսկուա, 1876:
12. Հ. Գ. Զարբհանալյան. Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895:
13. Լեո. Հայկական տպագրություն. հատ. Ա, Բ, Տիֆլիս, 1901—1902:
14. Լեո. Ստեփաննոս Նազարյանց, հատ. Ա, Թիֆլիս, 1902:
15. Լեո. Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902:
16. Լեո. Հայ գրքի տոնը. Թիֆլիս, 1912:
17. Գ. Լևոնյան. Հայոց պարբերական մամուլը. Ալեքսանդրապոլ, 1895:
18. Արիստակես եպս. Սեդրակյան. Հովհաննես եպս. Ծախաթունյանցի կենսագրությունը, Պետերբուրգ, 1898:
19. Մաղաքիա արք. Օրմանյան. Ազգապատմ, հատ. Բ, Կ. Պոլիս, 1912:
20. Կ. Կոստանյան. Հատիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը, Ալեքսանդրապոլ, 1910:
21. Ա. Զամինյան. Պատմություն հայ գրականության, մասն Ա, Բ, Ն. Նախիջևան, 1915:
22. Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, անդ. 1908:
- 22ա. Կ. Կոստանյան. Ներսես Ե կաթողիկոս Ամենայն Հայոց. 1909:
23. Վ. Փափազյան. Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910:
24. Թեոդիկ. Տիպ ու տառ. Կ. Պոլիս, 1913:



Մի էջ Աբգար Թոխաթեցու Սաղմոսարանից (1565 թ.)

28. Աղեք. Երիցյան. Պատմական տեսություն հայ տպագրության, Տըլփիս, 1879:

29. Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ. հատ. Ա, Երևան, 1932, 2, Երևան, 1934:

30. Գյուտ ա. քհն. Աղանյան. Դիվան հայոց պատմության. գիրք ԺԵ, Մանուել Կյումուշխանեցի. մասն 1, Թիֆլիս, 1917:

31. Աղեք. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսություն և Կովկասի հայք. 19-րդ դարում. հատ. Ա, Բ, Թիֆլիս, 1894—95:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ԵՂԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

1. «Ազգասեր», Կակաթա, 1846, № 2, 4:
2. «Բազմավեպ», 1863, 1896:
3. «Արարատ», Էջմիածին, 1868-ից մինչև 1919 թ.:
4. «Հիսիսափայլ»:
5. «Ազգասեր Արարատեան»:

6. «Հանդէս ամսօրեայ»:
7. «Լումայ»:
8. «Մեղու Հայաստանի»:
9. «Աղբիւր» և «Տարագ»:
10. «Ազգագրական հանդէս»:
11. «Անահիտ»:
12. «Փորձ»:
13. «Հովիտ»:
14. «Հովիտ»:
15. «Թատրոն»:
16. «Կոունկ»:
17. «Բանասէր»:
18. «Դպրոց» մանկավարժական ամսագիր, 1874—76:
19. «Արօր»:
20. «Էջմիածին» շաբաթաթերթ, Էջմիածին, 1920 թ.:
21. «Մշակ» օրաթերթ, 1893—99 թթ.:

Ն Ե Ր Ա Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա.

Հայ ազգի համար 1912—13 թվականները պանծալի հիշատակներով լի տարիներ էին: Այդ թվականներին լրացավ 1500 տարի սկսած այն օրից, երբ հայկական այք-բեճն ստեղծվեց և 400 տարի սկսած այն օրից, երբ առաջին հայ գիրքը լույս աշխարհ եկավ: Երկու փառավոր տոներ, որոնցով հայ ազգը քաղաքակիրթ Եվրոպայի առաջ պարծենալ կարող է:

Մի որևէ ազգի մեջ գրի գյուտի պահանջը այն ժամանակ է առաջ գալիս, երբ այդ ազգը մտավորապես այնքան է բարձրանում շրջապատից, որ յուր ներքին աշխարհի զգացածն ու ցանկացածը, յուր սրտի ամեն մի թրթիռը՝ արտաքին, աչքի համար տեսանելի գրավոր նշաններով արտահայտել է կամենում, իսկ երբ այդ ազգը մտավորապես հասնում է նաև այնպիսի գիտակցության, որ յուր զգացածն ու մտածածը ցանկանում է արագությամբ աշխարհի չորս կողմը տարածել, այն ժամանակ այդ ազգի քաղաքակրթության մեջ լուսավորության լայն ու մեծ նոր դուռն է բացվում: Այդպիսի խոշոր փոփոխություն տեղի է ունեցել քաղաքակիրթ աշխարհներում, տպագրության արվեստի ընդհանրացմամբ:

«Տպագրության գյուտը,—ասել է Վիկտոր Հյուգոն, Փարիզի Աստվածամոր տաճարում,—ամենանշանավոր դեպքն է պատմության մեջ... Դա սկիզբն է հեղափոխության... Շնորհիվ տպագրության, մարդկային միտքը դառնում է հավիտենական. նա դառնում է սավառնող, անքոնելի, անխորտակելի...»:

Տպագրության արվեստը հնարեց Գերմանիայի Մայնց քաղաքացի Հովհան Գյուտտենբերգը, որը յուր այդ գյուտով ազգերի քաղաքակրթության մեջ ընդհանուր և արագությամբ մեծ հեղափոխություն առաջ բերեց: Այդ արվեստը հնարելու համար ուրիշները ևս աշխատել են: Բայց միայն Գյուտտենբերգին էր վերապահված տպագրության գյուտի դափնիները, որովհետև միմիայն նորա ջանքերն են պսակվում հաջողությամբ:

Գյուտտենբերգը յուր հանճարեղ մտքի ու խելքի շնորհիվ օր ու գիշեր

չարչարվում է, թե ինչպես փայտից տառեր հնարի, ինչպես մետաղից նույնպիսի տառեր ձուլել կարողանա, որպեսզի նրանցով բառեր, տողեր, նախադասություններ ու երեսներ կազմելով՝ տպե թղթի վրա: Յուր այդ երկարամյա տքնության միջոցին նա զանազան գույնի թանաքներ է գտնում, թե չոր, թե հեղուկ, խոզանակ կամ բարձ՝ թանաքը քսելու համար. տախտակներ և շրջանակներ՝ տառերը միմյանց հետ ամուր պահելու համար. ոլորակներ և ծանրություններ՝ տառերը թղթի վերա սեղմելու և տպելու համար: Ամիսներ և տարիներ են անցնում այն փորձերի վերա, մինչև որ Գյուտտենբերգին հաջողվում է մի մամուլ ևս շինել, որը յուր մեջ պարունակում էր նորա ուզած մեքենայի բոլոր պայմանները:

Եվ այս մեքենան դառնում է մայր ապագա լուսավորության և տպագրական արվեստի համար:

Թե ե՞րբ է հնարել Գյուտտենբերգը տպագրության արվեստը՝ գիտությունը դեռևս չի կարողացել ճշտել²: Ոմանք ենթադրում են, թե նա պետք է 1436 թվին հնարած լինի այդ արվեստը: Ուրիշները առաջին տպագրող մեքենայի գյուտը դնում են 1441 թվին, սակայն բնականաբար երկար տարիների ընթացքում նա զբաղված է եղել այդ արվեստի և հնարած մեքենայի կատարելագործությամբ: Գյուտտենբերգը շատ հավատով լի քրիստոնյա մի մարդ էր, և մի սուրբ նպատակ ուներ, այնպիսի հնար մի միջոց գտնել կարողանա, որ Աստուծո խոսքն ավելի արագ տարածվեր մարդկանց մեջ Աստվածաշնչի միջոցով, քան մինչ այդ մարդիկ գործ էին դնում:

Այստեղ ուշադրության արժանի է, որ տպագրության սկզբնավորության շարժառիթը աստվածապաշտությունն է եղել և ոչ թե առևտրական կամ այլ շահադիտական նպատակ:

Երբ մամուլը պատրաստ էր, Գյուտտենբերգը սկսում է գրքեր տպագրել: Առաջին անգամ տպված այս գրքերի մասին շատ քիչ տեղեկություններ են մնացել: Այնուամենայնիվ Գյուտտենբերգի միակ նպատակն աչքի ստաջ ունենալով, դժվար չէ ենթադրել, թե ինչ բովանդակություն կարող էին ունենալ այդ գրքերը: Աստուծո ներշնչմամբ հնարված արվեստը Աստուծոն էլ պիտի ծառայեր: Աստուծո անվան փառաբանությունը և դեպի Նա ուղղած աղոթքը—ահա այն երկու ձայները, որ առաջին անգամ տպագրական մամուլն արձակեց Գյուտտենբերգի ձեռքի տակից: Նորա առաջին փառավոր գործը Աստվածաշնչի տպագրությունն էր, որը նա կարողացավ հաջողությամբ վերջացնել 1455 թվին:

Դորանից հետո տպագրության արվեստն այնքան զարգացավ, և Գյուտտենբերգի աշակերտներն այնքան հոշակ ստացան կարճ ժամանակամիջոցում, որ նրանցից ոմանք միաժամանակ այդ արվեստը հնարելու փառքը իրենց սեփականացրին, խլելով իրենց ուսուցչի ձեռքից նրա փառքն ու պատիվը, ուստի և Գյուտտենբերգը յուր կենդանության ժամանակ երկար տարիների աշխատանքի պտուղները վայելել չկարողացավ:

Սակայն երբ տպագրությունն այնքան ընդհանրացավ, որ նրա համը շատերը ճաշակելով սկսեցին փնտրել այդ աստվածային գանձը գտնողին, այն մարդուն, որ հայր հանդիսացավ ամբողջ մարդկության լուսավորության, այն ժամանակ գտան, որ այդ մեծ մարդը Հովհան Գյուտտենբերգն է եղել:

Գյուտտենբերգի մահից երկու տարի անց, այն է 1470 թվին, Փարիզի համալսարանի վերատեսուչ Ֆիշեն գրում է գիտնական Ռոբերտ Հագենին. «Ինչպես ասում են, Մայնց քաղաքից ոչ հեռու ապրում էր ոմն Հովհան Գյուտտենբերգ, որ հնարեց տպագրության արվեստը: Այս մարդը ճշմարտապես

արժանի է, որ բոլոր մուսաները, բոլոր արվեստները մարդկային բոլոր այն լեզուները, որոնք օգտվում են գրքից, փառաբանեն նրան աստվածային գովեստներով»*:

*
* *

Տպագրության արվեստի հնարումից հետո շատ բնական է, որ Եվրոպայի բոլոր ազգերն էլ շտապեին այդ օգտակար գյուտի գործածությունն ընդհանրացնել:

Այստեղ զարմանք կարող է պատճառել այն, որ Ասիայի մի անկյունում սպորող, թանձրամած խավարով շրջապատված, քաղաքականապես դժբախտ վիճակի մեջ գտնվող, անընդհատ հարստահարությանց մեջ ու կոտորածների ենթակա հայ ազգն էլ ետ չի մնում Եվրոպայից և Արևելյան ազգերի մեջ առաջինը նա է շտապում օգտվել տպագրության գյուտից: Գյուտտեղեկներգի ձեռքով առաջին տպագրած ս. Գիրքը լույս է տեսնում 1455 թվին, իսկ ինչպես արժանահավատ աղբյուրները վկայում են, գյուտից 57 տարի հետո, այն է 1512 թ. ուրեմն հոբելյանական թվից ուղիղ 400 տարի առաջ, տպագրվում է առաջին հայ գիրքը:

Սա պատմական մի այնպիսի իրողություն է, որ քաղաքակիրթ աշխարհին ստիպել կարող է հարգանքով վերաբերվիլ դեպի հայ ազգը: Սա անկասպտելի մի փառք է, որով հայ ազգը լուսավոր Եվրոպայի քաղաքակիրթ աշխարհի սուսջ պարծենալ կարող է:

Մինչդեռ տպագրության գյուտից քսան տարի անց, 1462 թ., արդեն այդ արվեստը զորեղ զենք էր դարձել քաղաքական կռիվների ժամանակ Մայնցի Դիտեր ֆոն-Իզենբուրգ արքեպիսկոպոսի և Նաստաուսկի իշխան Ադոլֆի մեջ, մինչդեռ, ինչպես միջնադարյան պատմությունը վկայում է, կաթոլիկությունը հետզհետե լուր ձեռքն է հավաքում տպագրության արվեստի իրավունքը և աուտոդաֆեի* ենթարկում շատ հրատարակություններ, — հայ հոգևորականության անդամները, իրենց գլուխ ունենալով ժամանակի կաթողիկոսներին, մեղվաջան աշխատությամբ շրջում էին Եվրոպայի զանազան քաղաքները, ծանոթանում և հմտություն ձեռք բերում տպագրության արվեստի մեջ և հակառակ կաթոլիկ կղերի հարուցած հալածանքներին, ծանր պայմանների մեջ առաջին հայ տպարաններն են հիմնում որոշ քաղաքներում, և աշխատում իրենց կյանքի գնով այդ լուսատու նրագները վառ պահել և նրանց արդյունավոր դարձնել հայ ժողովրդին մտավոր խավարից փարատելու համար, մինչև որ հնարավոր կդառնա մայր հայրենիք փոխադրել այն:

Այստեղ հայ հոգևորականությանը մեծ աջակցություն են ցույց տվել նաև հայկական գաղթավայրերը:

(Շարունակելի)

* Առ, Հայկական տպագրություն, հատ. Ա, էջ 3:

* Գերմաներեն նշանակում է կաթոլիկական հավատաբնության ասլանի կողմից հերետիկոսական համարված գրքերի հրապարակային այրում:

Հատ ութն ձայնից եղանակաց

Չափաւոր

Օրհ - ցեալ ես տէր Աստ-ուած հար-ցըն մե - րոց

օրհ-ցեալ դարձուածք փա-ռա - ւոր-եալ ա - ցուց քո յա լի - տեան,

Մանր

Փա-ռա - ւոր-եալ ա - ցուց քո

յա - լի - տեան,

փա-ռա - ւոր-եալ ա - ցուց քո յա - լի - տեան:

Միջակ

Մծ.

Մե - ծա - ցուս-ցե անճն իմ ըզ - տէր եւ ցըն-ծաս-ցե

հո - ցի իմ Աս-տու - ծով փըրկ-չաւ ի - մով:

Միջակ

Ո.

Ո դոր-մեա ինձ Աստ-ուած ըստ մե-ծի ո-ղոր- մու-թեան քում

ըստ բա-զում գը - թու - թեան քում քա-ւեա զա - ցո - րէ - ցու-թիւնս իմ:

Միջակ կամ Չափաւոր

Տ.

Օրհ - ցե-ցեք ըզ-տէր յերկ-ցից. օրհ-ցե - ցեք

ըզ - ցա ի բար-ծանց:


* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի № 9-ից:

Միջակ Չափաւոր

ՍԿ. 
 Օրհ - Գե - ցէք ման-կուքը ըզ - տեր եւ


օրհ - Գե - ցէք գա - ցու - ցըն տեաւն:

Չափաւոր Միջակ


ՀԱՐ. 
 Համ - բար-ձի զաչս իմ ի լե թիցս. ուս -

տի ե - կես - ցէ իՅձ օգ-նու - թիւն:

Միջակ Յորդոր

ՃԶ. 
 Սի - թե - ցի զի լուի - ցէ տեր ըզ-ձայն ա - ղօ -

թից ի մոց:



 Տէր քա - գա - ւոր - եաց զվա - յել-չու-թիւն ըզ - գե - ցաւ:

Չափաւոր

ԱՌ. 
 Օրհ-ճես-ցուք ըզ - տեր. զի փա ոօք է


փա - ուս ւոր - եալ:

Չափաւոր

ՀԳ. 
 Օրհ-ճեալ ես տեր Աստ-ուած, հար-ցըն մե - թոց օրհ-ճեալ

փա - ուս - ւոր - եալ ա - ցուց քո յա - լի - տեան:

Միջակ

ՄԾ. 
 Մե - ծա - ցուս - ցէ աճճն իմ ըզ - տեր եւ


ԳՐ՞ - ծաս - ցե հո - գի իմ Աստու - ծով փըրկ - չաւ ի - մով:
 Միջակ
 ո. Ո - դոր - մեա ինձ Աստուած ըստ մեծի
 ո - դոր - մու - բեան թում, ըստ բա - զում գը - թու - բեան թում բա - ւեա
 գա - նօ - րէ - նու - բիւնս իմ:
 Միջակ կամ Չափաւոր
 s. Օրհ - նե - ցեք ըզ - տեր յերկ - մից
 օրհ - նե - - ցեք ըզ - նա ի բար - ձանց:
 Միջակ կամ Չափաւոր
 ՄԿ. Օրհ - նե - ցեք ման - կունք ըզ - տեր եւ
 օրհ - նե - ցեք գա - նու - նըն տեառն:
 Միջակ Չափաւոր
 յ. ճ2. Տէր թա - գա - տր - եաց
 զվա - յել - չու - թիւն ըզ - գե - ցաւ:
 Չափաւոր Գձ
 ԱՌ. Օրհ - նե - ցեք ըզ - տեր զի փա - ոտք է փա - ու - տր - եալ:
 Չափաւոր կամ Միջակ
 Հ9. Օրհ - նեալ ես տեր Աստուած հար - ցըն մե - րոց օրհ - նեալ




փա - ու - լոր - եալ ա - նուՆ թո յա - լի - տեան:
Միջակ




Մե-ծա - ցուս-ցե աճճն իմ ըզ-տեր եւ ցըն-ծաս-ցե հո-գի իմ Աս-տու - ծով




Փըրկ-չաւ ի - մով:
Դարձուածք




Մե-ծա - ցուս - ցե աճճն իմ ըզ-տեր եւ ցըն-ծաս-ցե հո-գի իմ Աս-տու - ծով



Փըրկ-չաւ ի - մով:
Միջակ



Ո - ղոր-մեա իճճ Աստ-ուած ըստ մե - ծի ո - ղոր-մու-թեան թում,



ըստ բա-զում զը - թու-թեան թում բա-ւեա զա - ցօ - րէ - նու-թիւնս իմ:

Չափաւոր կամ Միջակ



Օրհ-նե - ցեք ըզ տեր յերկ-նից օրհ-նե - ցեք ըզ-նա ի բար-ձանց:

Չափաւոր կամ միջակ




Օրհ-նե - ցեք ման-կուՆք ըզ-տեր եւ օրհ-նե - ցեք զա-նու-նըն տեառն:

Չափաւոր կամ Միջակ




Համ-բար-ծի զաչս իմ ի Լե - թիճս ուս-տի ե - կես - ցե իճճ օգ-նու-թիւն:

Միջակ կամ Յորդոր



Տեր թա-գա - լոր - եաց զվա - յել - չու - թիւն ըզ - գե - ցաւ:

(Ծարունակկի)



Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. 140ա.—Կոնդակ Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Ներսէս Արքեպիսկոպոսի վասն յորդորելոյ մերոյ չտալ զիր հրաժարականն, այլ աննկուն ոգով համբերել:

Թ. 141բ.—Կոնդակ վահրամ նորասպակ Եպս. ի Մանկունոյ վասն ձեռնադրելոյ մերոյ զնա յաստիճանն եպիսկոպոսութեան:

Թ. 147ա.—Կոնդակ Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Ներսէս Արքեպիսկոպոսի, ի պատասխանի գրոյն որ վասն անլուծելի կարծեցեալ խնդրոյ Կաթողիկոսութեանցն Աղթամարայ և Ստոյ:

Թ.թ. 149ա—161ա.—Վերոհիշյալ կոնդակների և համակների ցուցակը:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Թ. 1ա.—1875 Նո 7:

Թ. 3ա.—Պատճենք կոնդակաց Գեորգ Դ. կաթողիկոսի վասն 1875 ամի:

Ի վերայ զանազան խնդրագրութեանց: (Ինքնագիր Գեորգ Դ. կաթողիկոսի):

Թ. 4բ.—Թարգմանութիւն:

Թ. 5ա.—Թարգմանութիւն: Փոխարքային Կովկասու:

Թ. 9բ.—Պաշտօնէի արտաքին գործոց և Եպարքոսի Պարսից տերութեան, ի Թէհրան:

Թ. 21ա.—Թարգմանութիւն: Նախարարի և (երբին) գործոց:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի ՌՆՆ ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի ՌՆՆ ը—Ժ-ից, 1968 թվականի ՌՆ Է-ից, 1970 թվականի ՌՆՆ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի ՌՆՆ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1972 թվականի ՌՆՆ Ա—Բ-ից:

Թ. 40բ.—Թարգմանութիւն: Գլխաւոր կառավարութեան Փոխարքայի ի Տփլիսի:

Թ. 51ա.—Թարգմանութիւն: Առ դեսպանն Կ. Պօլսոյ:

Թ. 69բ.—Ի վերայ կանոնադրութեան ճեմարանի:

Թ. 127բ.—Թարգմանութիւն: Առ դեսպանն ռուսաց ի Կ. Պօլիս:

Թ. 138բ.—Առ Եպարքոս պարսից ի Թէհրան:

№ 297

ԿՈՆԴԱՍՏԱՆ ԳԻՐԳ

Թերթերը՝ 147:—Պրակները՝ յուրաքանչյուրը 12-ական թերթից:—Մեծությունը՝ 84.5×28.7×2.2 սմ.:—Կտրվող՝ մաքուր ապիտակ դիմացկուն թուղթ:—Կագմը՝ հաստ ստվարաթուղթ, որի վրա կողքին մի փոքրիկ քառակուսի թղթի վրա գրված է հետևեալը՝ «Մաշր մատեան կոնդակաց 1895 ամի»:—Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հասարակ քարակ ապիտակ թուղթ:—Վիճակը՝ բավարար: Մատյանի վերջից բավականի քանակությամբ չգրված մաքուր ապիտակ թղթեր պոկված և հանված են:—Գրությունը՝ միասույն:—Դատարկ թղթերը՝ 1ա—5բ, 142ա—147բ:—Տողերը՝ անկանոն, 29—31:—Գծումները՝ առանց ճնշումի, աչքի չափով:—Գիրը՝ շեղագիր:—Զարդագրություն՝ չունի: Միայն թղթի վերևի մասի ձախակողմյան անկյունում կա մի փոքրիկ կնիք, ոչ թանաքով, այլ ճնշումով, 2.7×1.7 սմ. չափերով, որի վրա գրված է թղթի ֆաբրիկայի անունը՝ Дятковскаго товарищества № 4:—Գրիչը՝ Նրիմյան Կաթողիկոսի քարտուղարը՝ վահան սարկավագ:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Նրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոս:—Ժամանակը՝ 1895 թ.:—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք:—Ծանոթություն՝ սույն

ձեռագիրը ստացված է Ռ. Ճեմարանի գրադարանից հոգեւնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանի ձեռքով 1965 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 6ա—141բ.—Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1895 թ. գրած 1197 կարևոր կոնդակների և մամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար տրվում են վերնագրերը:

Թ. 11բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի ... Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Ամենապատիւ տ. Մատթեոսի Ա. արքեպիսկոպոսի հարազատ որդոյ Մայր Աթոռոյ և յաւէտ սիրելոյ Մերում խնդալ ի Տէր (ի մասին Տանն Կլիկիկո Մկրտիչ կաթողիկոսի մահվան):

Թ. 24ա.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի ... Նախագահի տպարանին Մայր Աթոռոյ Գեր. տ. Արիստակէս եպս.-ի Դաթեան հարազատ որդոյ Մայր Աթոռոյ ողջոյն և օրհնութիւն (ի մասին Կոմիտաս և Եզնիկ Նորընծա արեւաներին Արիստակէս եպս.ի գործակից նշանակման):

Թ. 50բ.—316. Գրութիւն յանուն Գեորգ արկաւագի Չէօրէշեան:

Թ.թ. 51բ.—54ա.—(Խրիմյան Հայրիկի տեսակցությունը Պետերիոֆում ռուսաց Նիկոլայ Բ. կայսեր հետ, այս վերջնույս զահակաւորոյունը շնորհավորելու և հայ ազգի տառապանքի մասին խտելու: Սրան կցված է վեհափառի ուղերձը և կայսեր պատասխանը):

(Հետաքրքրության համար ստորև տրվում է վեհափառի ուղերձի վերջին հատվածը միայն):

Թ. 53բ.—...Թոյլ տուք ինձ յուսալ, Տէր արքայ, զի ըստ հրամանի Ձերդ Կայսերական Մեծութեան ցուցեալն ի Կայսերական կառավարութեան Ձերմէ շնորհաձիր պաշտպանութիւն քրիստոնէից հինն Հայաստանի տացէ վախճան հեծութեան ներկոյցն ընդ լծով Մահ(թ. 54ա)մէտական մոլեռանդութեան: Որպէս Հովուապետ կոչեցեալ տալ համար վասն ամենից հոգևոր գաւակի իմոյ աղէրսիմ զՄեծութիւն Ձեր, հզօր բանի Ձերով անիլ զի վնդճան տացի պղծութեան սեղանոյ, զորս կանգնեցին անմիջական աշակերտք Սրբազան Առաքելոցն, զի դատարեացին տառապանք պաշտօնէից Եկեղեցոյ, կոտորածք տղայոց և առանգութիւնք կուսանաց բռնի մղելոց ի մահմետականութիւն և այսուիկ փրկել զծողովորդ իմ որ ի Տանկաստան ի բնաչինչ լինելոյ:

Ի վերայ իսկնակնին ստորագրեալ է Մկրտիչ կաթողիկոս Ամենայն Հայոց 31 Մայիսի 1895 ամի ի Պետերիոֆ:

Թ. 60ա.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Գերապատիւ Տ. Գեորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց վիճակատր Առաջնորդի Տփղեաց, նախագահի հոգաբարձութեան Ներսիսեան Հոգևոր դպրանոցի և պատուարժան անդամոց հարազատից Մայր Աթոռոյ ողջոյն և Հայրապետական օրհնութիւն (Սամվել Բալայանի Ներսիսյան դպրոցի տեսուչ նշանակելու մասին):

Թ. 62ա.—419. Գրութիւն յանուն քարտուղարին Հայկական ճեմարանական ընկերութեան ի Էլչքցիկ: Թ. 97բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Առաքինաւ Հայագն որդոյ Մերոյ սիրելեաց պանդխտելոց լիւթիլըն քաղաք Ամերիկայի, հարազատից Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն (սովատանջ սասունցիներին նյութապէս օգնելու համար Ամերիկայից ուղարկված դրամական օգնության մասին):

Թ. 126բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Պայծառափայլ Հայագն իշխանի և զօրապետի, հարազատ որդոյ Մայր Աթոռոյս և յարգելի բարեկամի Մերոյ, Գեներալ Նիկողայոսի Վ. Բեհրոյթեան նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ (շնորհավորոյուն զորավարի աստիճան ստանալու առթիվ):

Թ. 140ա.—Գրութիւն Վեհի առ ներքին գործոց նախարարն Պետերբուրգ:

ՀԻՇԱՍԱԿԱՎԱՆՆԵՐ

- Թ. 6ա.—1895 ամ Յունվար:
Թ. 49ա.—Քրտ. Վախան սրկ. (երկու անգամ):
Թ. 141բ.—Վերջ 1895 ամի:
Քրտոյր. Վեհ սրկ.:

№ 298

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐՔ

Թերթերը՝ 180.—Պրակները՝ յուրքանջուորը 12-ական թերթից:—Մեծությունը՝ 34.3×23.7×2.3 սմ.:—Նյութը՝ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ:—Կազմը՝ հաստ սովարաթուղթ, որի վրա կողքին մի փոքրիկ քառակուսի թղթի վրա գրված է հետևյալը՝ «Մայր մատեան կոնդակաց 1896 ամի»:—Պահպանակները՝ առաջից և վերջից մեկական սպիտակ մաքուր թուղթ:—Վիճակը՝ բավարար: Մատյանի վերջից բավականի քանակությամբ չգրված մաքուր սպիտակ թղթեր պրկված և հանված են:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—2բ, 105բ, 114բ, 119բ, 174ա—180բ:—Տողերը՝ անկանոն, 25—36:—Գծումները՝ առանց ճշումի, աչքի չափով:—Գիրը՝ շեղագիր:—Չարդագրություն՝ չունի: Միայն թղթի վերևի մասի ձախակողմյան անկյունում կա մի փոքրիկ կնիք, ոչ թանաքով, այլ ճշումով, 2.7×1.7 սմ. չափերով, որի վրա գրված է թղթի ֆաբրիկայի անունը՝ ДИТЯКОВСКАГО ТОВАРИЩЕСТВА № 4:—Գրիչը՝ շատ հավանաբար Հա՛ստոյ մատյանի գրողը՝ Վախան սարկավագ, կաթողիկոսի քարտուղարը:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոս:—Ժամանակը՝ 1896 թ.:—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք:—Ծանոթություն՝ սույն ձեռագիրը ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեւնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանի ձեռամբ 1965 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 3ա—173բ.—Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1896 թ. գրած 1875 կարևոր կոնդակների և

նամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար, տրվում են վերնագրերը:

Թ. 11բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Գերապատի Ս. Արիստակես Եպիսկոպոսի Գաթ-Երապատի Ս. Արիստակես Եպիսկոպոսի Մայր Աթոռույց յայտ առնեմք (տպարանի մասին):

Թ. 52ա.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Թ. 51ա.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... Գեր. Թեմակալի վիճակատր) հայոց Աստրախանի Ս. Արիստակես Արքեպիսկոպոսի Հայրապետական ողջոյն և օրհնութիւն (հունվար ամսին փակված Եկեղեցական ծխական դպրոցների մասին):

Թ. 62բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Վիճակատր Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմերեթի և նախագահի հոգաբարձութեան Ներսիսեան հոգևոր դպրանոցի Գեր. Ս. Գեորգ Արքեպ.ի հարազատի Մայր Աթոռույց ողջունի յայտ առնեմք (Ներսիսյան դպրոցի շենքի փոխադրության հարցի մասին):

Թ. 75ա.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Հարազատ որդւոյ Մ. Աթոռույց Պ. Աղէքսանդրի Մանթաշեանց, նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ (Կոմիտաս վարդապետին իր արած նյութական օժանդակության մասին):

Թ. 84ա.—(Խրիմյան Հայրիկի նամակը Ռուսաստանի կայսեր՝ հայկական դպրոցների մասին):

Թ. 150բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Նախորդ Պատրիարք Ս. Մատթեոս Արքայան Երբոր Մերում ողջոյն եղբայրական սիրոյ օրհնութիւն և խաղաղութիւն ընդ Ձեզ. Ամէն: (Ողբ Մշո Ա. Կարապետ և վանի վարագա վանքերի ամաչացման և հայ ժողովրդի տառապագին վիճակի մասին):

(Ստորագրված է այսպես)

Աղօթակից Հայոց վշտակիր Հայրիկ:

Թ. 171բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Միաբան Մայր Աթոռույց և հարազատի սորին, Գեր. Ս. Սուքիաս Արքեպիսկոպոսի ողջունի և օրհնութեամբ յայտ առնեմք. (հրահանգներ «Արարատ» ամսագրի մասին):

ՀԻՇՍԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.—Մայր Մատեան Կոնդակաց և գրութեանց վեհափառ Հայրապետի վասն 1898 ամի ի 16 Յունուարին Պ 17

№ 299

ԿՈՆԴԱԿԱՆ ԳԻՐԸ

Թերթերը՝ 125:—Պրակները՝ յուրաքանչյուր 12-ական թերթից:—Մեծությունը՝ 85×22.8×1.5 սմ.:—Նյութը՝ գծավոր բարակ դիմացկուն թուղթ:—Կազմը՝ հաստ սովարաթուղթ:—Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հասարակ խունացած բարակ թուղթ:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—2բ, 125ա, 125բ:—

Տողերը՝ 32:—Գծումները՝ թուղթը ինքնին գծավոր է գործարանից:—Գիրը՝ շեղագիր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ կաթողիկոսի քարտուղարը:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս:—Ժամանակը՝ 1897 թ.:—Վայրը՝ ս. Էջմիածնի վանք:—Ծանոթություն՝ սույն ձևագիրը ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաբարյանի ձեռամբ 1985 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 3ա—124բ.—Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1897 թ. գրած կարևոր կոնդակների և նամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար, տրվում են վերնագրերը:

Թ. 4բ.—Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի ...

Գեր. Ս. Մակար Արքայ. Եպիսկոպոսի Եղբայրական սիրոյ ողջունի յայտ առնեմք (Մայր Տաճարի լուսարարապետ Ըջանակման մասին):

Թ. 6ա.—...Նորընտիր Պատրիարքի Կ. Պօլսոյ Ամենապատի Տէր Մաղաթիա Ա. Արքեպիսկոպոսի Օրմանեան, շնորհածին որդւոյ Մայր Աթոռույց նուիրեմք ողջոյն Առաքելական հանդերձ Հայրապետական օրհնութեամբ (իր Կ. Պոլսո հայոց Պատրիարք ընտրության առթիվ):

Թ. 47ա.—Նորին Վեսնութեան Ա. Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու (Եկեղեցական ծխական դպրոցների փակման մասին):

Թ. 52ա.—Ողորմած Տէր,

Իշխան Գրիգորի Սերգէվիչ (Կառավարչապետ) (Տիխիսի Մարիամյան-Հովնանյան օրիորդաց ուսումնարանի փակման մասին):

Թ. 73բ.—Պատուարժան Հոգաբարձութեան ազգային անդամոց Հայոց Պուքրէշթի, հարազատ որդւոյ Մայր Աթոռույց, նուիրեմք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն (հայազգի Մարիամ Թագվորյանի և հրեա Նաթան Ծթայնֆելդի ամուսնության մասին):

Թ. 82ա.—Սինոդի ս. Էջմիածնի (վարդան Արովյանի մահվան մասին):

ՀԻՇՍԱԿԱՐԱՆ

Թ. 3ա.—1897:

ՀԻՇՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—1897 թ. № 18:

№ 300

ԿՈՆԴԱԿԱՆ ԳԻՐԸ

Թերթերը՝ 167 (1—155 մատյանի հիմնական թերթերն են, իսկ 156—167 թերթերը հետագայում են ավելացված):—Պրակները՝ յուրաքանչյուր 16-ական թերթից:—Մեծությունը՝ 84.2×22.2×1.5 սմ.:—Նյութը՝ գծավոր բարակ դիմացկուն թուղթ:—Կազմը՝ հաստ սովարաթուղթ:—Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հասարակ խունացած բարակ թուղթ:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միապուն:—

Դատարկ թղթերը՝ 1ա—2բ, 164բ—167բ:—Տողերը՝ 30:—Գծումները՝ թուրյոթ ինքնին գծավոր է գործարանից:—Գիրը՝ շեղագիր:—Ջարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Կաթողիկոսի քարտուղարը:—Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս:—Ժամանակը՝ 1898 թ.:—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք:—Մանրություն՝ սույն ձևագիրը ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգևշնորհ տ. Նարեկ վարդապետ Ծաբարյանի ձեռամբ 1965 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 3ա.—164ա.—Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի 1898 թ. գրած կարևոր 1557 կոնդակների և նամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար, տրվում են վերնագրերը:

Թ. 23բ.—Ամենապատի Պատրիարքի Առաքելական Աթոռոյն Ս. Յակոբեանց Տ. Յարութիւն Ա. Արքեպիսկոպոսի, յաւետ սիրելոյ Մերոյ խնդալ յար ի Տէր (Գևորգ Ծ. վրդ. Երեցյանի Եպիսկոպոս ձեռնադրության մասին):

Թ. 53բ.—Ամենապատի Պատրիարքին Կ. Պօլտոյ Տ. Մաղաքիայ Ս. Արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռոյս խնդալ ի Տէր (գաղթականների տըխտը կացութեան մասին):

Թ. 86ա.—Հայկազուն հարազատ որդոց Մայր Աթոռոյս մերոյ, բնակելոց ի Պարսկաստան և ի Հընդկաստան և ի հոչակատր քաղաքս նոցին, ի Թեհրան, յԱպախան, ի Ջուղա, ի Կալկաթայ, ի Մատրաս և ի յայլ և այլ կղզիս կողմանցն նուիրեմք զաստուածային օրհնութիւն և զփրկչաանդ ողջոյն (Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առաջնորդ Եսայի արքեպիսկոպոսի հրաժարման և նոր առաջնորդի՝ նորապապ Մաղաքիա Եպիսկոպոս Տերունյանի նշանակման մասին):

Թ. 92ա.—ԶԲրիստոսաանդ ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ նուիրեմք հարազատ և հայկազն որդոց մերոց սիրելեաց տարագիր զաւակացո Մօրս լուսոյ Ս. Կաթողիկէ Էջմիածնիս Ձեզ ամենեցուն, որ բնակեալ կաք ի նոր աշխարհն Ամերիկա, և ի քաղաքս նորին յՌատր, ի Նիւ Եօրք, ի Բոստոն, ի Շոգէնս, ի Փրովիտէնս և յայլ քաղաքս և յաւանս նորին քարեշնորհ վարդապետացո, քահանայիցո, յարգելի հոգաբարձուանդ, քարեջան վաճառականացո, ծրաջան արհեստաւորացո, քրտնաջան երկրագործացո և մշակացո, պարկեշտատուն

տիկնանցո և ամենայն չափու և հասակի ի Քրիստոս հաւատացեալ որդոց յԱթոռակալէս Ս. Առաքելոցն Թաղէտսի և Բարդուղիմէտսի նախկին լուսաւորչացն Հայաստան աշխարհիս և Ս. Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ լուսաւորչի, որոյ երկնուաց վարդապետութեամբ հաւատացեալք էք, ի Տէր մեր Յիսուս Քրիստոս խնդալ (Հովսեփ Եպիսկոպոս Սարաճյանի՝ Ամերիկայի առաջնորդ նշանակման մասին):

Թ. 132ա.—ԶԲրիստոսաանդ կենսածիր սուրբ ողջոյն առատազէղ օրհնութեամբ շնորհաց Ս. Հոգւոյն նուիրեմք յԱռաքելական Աթոռոյ աստի ի Քրիստոսահիմն Մ. Կաթողիկէ Ս. Էջմիածնէս Ձեզ ամենեցուն, որ տարագիր կայք ի Հայաստան աշխարհի և բնակիք յայլ և այլ պետութիւնս և ի քաղաքս Եւրոպիոյ ... (հայրենասիրական և կրոնա-քարոյական ոգիով գրված մի գեղեցիկ կոնդակ, Գևորգ վարդապետ Ութուջյանի Եպիսկոպոս ձեռնադրման և Եվրոպայի հայոց առաջնորդ նշանակման մասին):

Թ. 137ա.—Հարազատ և հայկազուն որդոց Մերոց սիրելեաց բնակելոց յԵգիպտոսն ի Գահիրէ և յԱղէքսանդրիայ, սրբանուէր քահանայից և համայն դասու հոգևորականաց, վսեմաշուք փաշայից, ազնուազարմ իշխանաց, յարգելի վաճառականաց, պատուարժան անդամոց Երեսփոխանական և քաղաքական ժողովոց, մեծ(այարգ) անդամոց թաղական խորհրդոյ արգոյ հոգաբարձուաց, ուսումնարանաց, քարեջան ուսուցչաց և ուսուցչուհեաց, աշխատասէր արհեստաւորաց և առհասարակ համայն հարազատից Մ. Աթոռոյս Ս. Կաթողիկէ Էջմիածնիս, նուիրեմք յառաքելական Աթոռոյ աստի ողջոյն և Հայրապետական օրհնութիւն (Եգիպտոսահայոց առաջնորդական Տեղապաճ Հակոբ վարդապետ Աշոտ Փափազյանի Եպիսկոպոս ձեռնադրության մասին):

Թ. 138բ.—Ամեն. Պատրիարքին Հայոց Կ. Պօլտոյ Տ. Մաղաքիա Ս. Արքեպիսկոպոսի, հարազատի Մ. Աթոռոյս և սիրելոյ եղբօր Մերում խնդալ ի Տէր (Եղիշէ վարդապետ Դուրյանի, Հակոբ վարդապետ Աշոտ Փափազյանի և Գևորգ վարդապետ Ութուջյանի Եպիսկոպոս ձեռնադրության մասին):

ԼԻՇՈՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 3ա.—1898:

ԼԻՇՈՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—1898 թ.—№ 19:

(Ծարունակելի)



ՀԱՆԳԻՍ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈՒ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ,
ՔԵԼԱՄՅԱՆԻ
(1887—1972)



Սույն թվականի ապրիլի 9-ին Լեհիճակա-
 նում, 85 տարեկան հասակում, վախճանվեց
 տ. Հակոբ ավագ քահանա Քելամյանը:

Հանգուցյալը ծնվել է 1887 թվականին
 Մուսա-Լեռ գյուղում (Կիլիկիա), բանվորի
 ընտանիքում: Կրթությունը ստացել է տեղի
 ծիսական դպրոցում և ավարտել է նրա լրիվ
 դասընթացը:

Տ. Հակոբ քահանան 1915—1919 թվա-
 կաններին ականատես և ժամանակակից է
 եղել Կիլիկիայում տեղի ունեցող ահալոր
 դեպքերին: 1927 թվականին Տանն Կիլիկիո
 կաթողիկոս Տ. Սահակ կաթողիկոս Խաբա-
 յանի կողմից Հայեպի ս. Քառասնից Ման-
 կանց եկեղեցում ձեռնադրվել է քահանա:

1939 թվականին նա իր հոտի հետ հաս-
 տատվել է Լիբանանում և մեծ աշխատանք
 ծավալել տեղի Այնճառ գաղթական հայ հա-
 մայնքի կազմավորման գործում:

1946 թվականին տ. Հակոբ քահանան
 բազմաթիվ այնճառցիների հետ ներգաղթել
 է Սովետական Հայաստան և մշտական բնա-
 կություն հաստատել Լեհիճակյան քաղաքում:
 Այնտեղ հանգուցյալը մինչև իր մահը պաշ-
 տոնավարել է ս. Աստվածածին եկեղեցում:

1956 թվականին իր երկարամյա ծառայու-
 թյան համար Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի
 կողմից արժանացել է ավագ քահանայու-
 թյան պատվի:

Տ. Հակոբ քահանան եղել է իր հոտի կող-
 մից սիրված, իր բարձր կոչման գիտակցու-
 թյունը ունեցող հավատավոր, բարի և ժրա-
 ջան հովիվ:

Հանգուցյալի վերջին օծումը կատարվել է
 ապրիլի 11-ին ս. Աստվածածին եկեղեցում,
 առաջնորդական փոխանորդ տ. Նարեկ վրդ.
 Ծաքարյանի ձեռքով, որը և իր դամբանա-
 կանի մեջ վեր է հանել հանգուցյալ տեր հոր
 եկեղեցանվեր կյանքը և գործունեությունը:

Հանգուցյալի մարմինը ամփոփվել է Լեհի-
 ճակյանի հայոց գերեզմանատանը:

Հանգիստ իր ոսկորներին:



ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌԸ*

Այս կրկնակ ստումներով նույնքան և ավելի մեծ է հայ թարգմանական գրականության ուսումնասիրության նշանակությունը, որքան ինքնուրույն գրականության նշանակությունը, և այստեղից էլ, հասկանալի է, հայ մատենագրության ընդհանուր համաքարքառ կազմելու ծրագիրը պիտի հավասարապես ընդգրկեր և՛ ինքնուրույնը և՛ թարգմանականը:

Ծիշտ է ըստ բնույթի երկու տեսակի համաքարքառներ կազմելու այն ծրագիրը, որով ընթանում է այժմ քարտարանային բաժինը: Հետագայում կարող են ըստ անհրաժեշտության շեղումներ լինել այդ ծրագրից:

Քերականական լիակատար համաքարքառներ կազմելու համար ինքնուրույն և թարգմանական մատենագրությունից կընտրվեն միայն այնպիսի հեղինակներ ու երկեր, որոնք կարող են լիարժեք նյութ մատակարարել գրաբարի ուսումնասիրության և նրա քերականական պատմության ստեղծման համար, իսկ լեզվի տեսակետից երկրորդական կարգի երկերի հետազոտության համար կարելի է օգտվել ընտրովի համաքարքառներ կազմելու սլըզբունքից: Ըստ այսմ՝ քերականական լիակատար համաքարքառներ կունենան ասորերենից և հունարենից թարգմանված գործերը, ներառյալ՝ հունարան դպրոցի թարգմանությունները և հայ հեղինակների այն երկերը, որոնք այս կամ այն չափով կրել են նրանց լեզվական ազդեցությունը: Լատիներենից կատարված թարգմանությունների շարքում գլխավոր ուշադրությունը կենտրոնի միաբանողների լատինաբան թարգմանություններին, որոնցից գիտական նշանակություն ներկայացնող ծավալուն ու կարևոր գործերը, որոնք հիմնականում ծնունդ են տվել լատինաբան հայերենի երևույթին, անհրաժեշտաբար կունենան լիակատար համաքարքառներ, իսկ մնացածները, որոնք բավականին ստվար թիվ են կազմում, և նրանց հետ միասին հայ ինքնուրույն հեղինակներից նրանք, որոնք լատինաբանությունների հունով են գնացել, կունենան միայն ընտրովի համաքարքառներ:

Ի դեպ՝ ասենք, որ լավ կլիներ, եթե պատրաստվող քերականական համաքարքառները, որոնք ինչպես տեսանք Խորենացու համաքարքառի նմուշով, հույական ֆորմիվածք ունեն, օժտվեին նաև մի լրացուցիչ հատկությամբ: Դա կկայանար մի որևէ ձև գտնելու մեջ՝ ի հայտ և ի մի բերելու բաների միջաձանցներն ու վերջաձանցները, բառաբարդությունների երկրորդական մասերը և քերականական նմանօրինակ ուրիշ պարագաներ:

Բնագրային համաքարքառներին պիտի տրվի, ի հարկե, ավելի լայն տեղ, որովհետև, ինչպես նշեցինք Եզնիկի համաքարքառի կապակցությամբ,

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. ԺԱ.—ԺԲ և 1972 թ. Ա.—Բ համարներից:

նրանցից օգուվելու են գիտության շատ նյութերի մասնագետներ: Բայց առաջին հերթին նրանք բնագրային տվյալներ կհայթայթեն պատմա-բանասիրական ուսումնասիրությունների համար: Բանասերն ու պատմաբանը, որոնք քննության ստարկա իրողությունների, երևույթների և գաղափարների ակունքներն են որոնում գրավոր աղբյուրներում, հարցերի լուծման համար շատ հաճախ դիմում են բնագրային համեմատությունների եղանակին, իսկ բնագրային համեմատությունների համար եզրերի հայթայթումը՝ բնագրային համաբարբառների գործն է:

Բնագրային լիակատար համաբարբառներ կունենան հայ ինքնուրույն գրականության Ե—ԺԵ դարերի արտադրությունները. իսկ ԺԶ—ԺԸ դարերի երկերը կունենան լիակատար և կամ ընտրովի համաբարբառներ՝ ըստ կարևորության: Լիակատար համաբարբառներ կունենան Ե—ԺԳ դարերում ասորականից և հունականից թարգմանված երկերը: Լատիներենից եկած գրականության բնագավառում լիակատար համաբարբառներ կունենան Լամբրոնացու թարգմանությունները և միաբանողների կողմից թարգմանված՝ աստվածաբանական և իմաստասիրական բնույթի միայն խոշոր գործերը. իսկ լատինաբան թարգմանությունների մնացած զանգվածը՝ կարելի է մասամբ ենթարկել ընտրովի համաբարբառի և մասամբ անտեսել: ԺԷ—ԺԸ դարերում ոչ-միաբանող թարգմանիչների ձեռքով լատիներենից կատարված թարգմանությունների մի մասը, որը նյութեր կտա լատիներենի ազդեցությանը ստեղծված գիտական տերմինաբանության և գիտական մտքի զարգացման պատմությանը, նույնպես կենթարկվի լիակատար համաբարբառի, իսկ մյուս մասը՝ ընտրովի համաբարբառի:

Այսպիսով՝ հին Հայաստանի հատկապես դասական շրջանի մատենագրությունն ամբողջությամբ կունենա իր քերականական և բնագրային համաբարբառները:

Այս հանգամանքը կթելադրեր ամենից առաջ մտածել հայկական Աստվածաշնչի մասին, որի լեզուն, ոսկեդարի մեր հեղինակների հետ միասին, հայ գրաբարաբան գրականության հիմնաքարն է հանդիսանում: Բացի այդ՝ որպես մի աղբյուր, որի հետ այսպես թե այնպես կապված էին միջնադարյան աշխարհի բոլոր գիտելիքները, Աստվածաշունչը եղել է այն միակ գիրքը, որն ամենից շատ է ենթակա եղել վկայակոչումների հայ բազմաճյուղ մատենագրության մեջ: Այս կրկնակ պատճառներով հայկական Աստվածաշնչի բնագրային ուսումնասիրությունների ասպարեզում հետազոտության համաբարբառային եղանակի կիրառումն առաջնակարգ նշանակություն ունի այսօր հայագիտության համար: Այս գաղափարն արդեն հասունացել էր, ինչպես տեսանք ներկա աշխատության առաջին մասում, ԺԺ դարի վերջերին, երբ լույս էր տեսել Թ. Վ. Աստվածատուրյանի «Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց»-ը, որն այսօրվա առումով բնագրային բնույթի համաբարբառ է: Որպես բնագրային համաբարբառ՝ այս աշխատության մակարդակը կարող է ընդհանրապես բավարար համարվել բանասիրական-մատենագրական աշխատանքների համար, թեև լավ կլինեք կազմել նորը՝ գիտության ժամանակակից պահանջների հիման վրա: Նվազագույն դեպքում՝ կարելի է հավելվածական մի հատորով լրացնել նրա պակասները և ուղղել թերությունները: Իսկ ինչ վերաբերում է Աստվածաշնչի քերականական համաբարբառ ունենալու հարցին, այդ մասին կարելի է միայն պատասխանել, թե դա հրամայական անհետաձգելի պահանջ է, քանի որ գրաբարի հետազոտության

ամենահիմնական ակունքն է Աստվածաշունչը: Այդ աշխատանքը պիտի ձեռնարկվի՝ որքան հնարավոր է շուտ: Ամենից առաջ Աստվածաշնչի հետ է կապված մեր ինքնությունը և թարգմանական գրականության մեծագույն մասը՝ թե՛ լեզվական առումով, թե՛ բովանդակությամբ:

Ինչպես տեսանք՝ հայ մատենագրության ընդհանուր համաբարբառ ստեղծելու ծրագրի իրականացման ուղու վրա արդեն նկատելի արդյունք է ձեռք բերվել քարտարանային բաժնում:

Գրաբարալեզու գործերը մշակելու համար անհրաժեշտ է գրաբարի հմտություն, դրա հետ միասին՝ բարեխղճություն և կատարվող գործի մեծ կարևորության գիտակցում, այլապես աննշան անփութությունը կամ ձևական մոտեցումը կարող է տապալել գործը: Բավական է, որ մի համաբարբառի մեջ էջերի մի քանի հղումներ սխալ լինեն և աշխատանքը կդառնա անլրատահության առարկա, դեռ չխոսելով գիտական բնույթի վրիպումների մասին: Լևոն նկատառումով համաբարբառ կազմելու աշխատանքի համար ընտրված են եղել համապատասխան աշխատակիցներ, որոնք ունեն բանասիրական կրթություն և եռանդով նվիրված են իրենց աշխատանքներին, ինչպես նկատեցինք մեր գրույցների ժամանակ:

Աշխատանքի բավականին որոշակի բաշխում գոյություն ունի բաժնում:

Ըստ հեղինակների կատարվող աշխատանքների մի մասը աշխատակիցների միջև բաշխված է հետևյալ ձևով.

Օ. Մ. Խաչատրյան—Մովսես Խորենացի, Բարսեղ Կեսարացի, Հովհաննես Օձնեցի, Վարդան Պատմիչ Թաթարաց («Պատմություն Թաթարաց»), Թովմա Մեծոփեցի:

Բ. Ա. Եգանյան—Արիստոտել («Պատմություն յաղագս աշխարհի»), Անանուն «Աշխարհացոյց», Մխիթար Գոշ:

Ժ. Ծ. Հովնանյան—Ղևոնդ Երեց Պատմագիր (Ղևոնդ Վարդապետ), Ֆրիկ:

Ա. Գ. Բաղդասարյան—Մխիթար Այրիվանեցի, Վարդան Արևելցի (Բարձրբերդեցի անվան տակ), Սիմեոն Երևանցի:

Լ. Ա. Ղուղազարյան—Թովմա Արծրունի, Կիրակոս Գանձակեցի:

Հ. Վ. Սարգսյան—Արիստակես Լաստիվերտցի, Մաղաքիա Աբեղա, Ամիրդովլաթ Ամասիացի:

Վ. Մ. Գևորգյան—Ստեփանոս Օրբելյան, Փավստոս Բուզանդ, Մխիթար Հերացի:

Է. Հ. Դեմիրճյան—Կորյուն, Առաքել Դավրիժեցի:

Հ. Ա. Հովհաննիսյան—Ղազար Փարպեցի:

Ժ. Բ. Թոսունյան—Եզնիկ, Գրիգոր Նարեկացի («Մատենան ողբերգութեան»):

Հիշատակելի են նաև բաժնի նախկին աշխատակիցներ Օ. Ա. Հարությունյանը, որը մշակել է Հովհաննես Դրասխանակերտցի, և Հ. Գ. Արսենյանը՝ Սամուել Անեցի:

Որոշ հեղինակների երկերի մշակման վրա փոխնիփոխ աշխատել են տարբեր աշխատակիցներ: Այդպիսիներից են՝ Ազաթանգեղոս, Եղիշե, Հովհաննես Մամիկոնյան, Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի, Շապուհ Բագրատունի, Գրիգոր Նարեկացի (տաղերը), Ստեփանոս Ասողիկ, Ուլստանես, Ներսես Շնորհալի, Մատթեոս Ուռհայեցի, Մխիթար Հերացի, Մխիթար Անեցի, Սմբատ Սպարապետ, Հեթում Պատմիչ և Զաքարիա Քանաքեղցի:

Մշակման աշխատանքներում բառաբարտերի այբբենական դասավորման կարևոր գործը կատարում է Ն. Խ. Ռաֆայելյանը, իսկ գլխադաս մեքենայով բնագրերի բազմացման գործը երկար տարիներ վարել է Ս. Տ. Սահրդյանը. ներկայումս այդ գործը, իրենց աշխատանքներին զուգընթաց, կատարում են Վ. Մ. Գևորգյանը և Ժ. Բ. Թոսունյանը:

Քարտարանային բաժնի աշխատակիցները, ներառյալ և նախկինները, պաշտոնով բոլորն էլ կրտսեր գիտական աշխատողներ են:

Արդեն մի տասնյակ տարի է, որ գիտական աշխատողների այս փոքրիկ խումբը տքնում է գրաբարագիր հեղինակների համաբարբառներ պատրաստելու գործի վրա: Իսկ համաբարբառները խմբագրելու պատասխանատու գործին լծված են հայտնի լեզվաբաններ՝ պրոֆ. պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, Վ. Ա. Քոսյանը, Ալ. Ս. Մարգարյանը, դոց. Պ. Ս. Բեդիրյանը:

Մենք արդեն նշեցինք, որ մատենագրական մի ընդհանուր համաբարբառ ունենալու գաղափարը դեռ ԺԸ դարի սկզբներին սաղմնավորվել էր լեհահայ գաղութում և ապա անել ու գործնական որոշ հանգրվանի հասել Ադրիականի ափերում՝ ծնունդ տալով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային գործին: Նաև պարզեցինք և աշխատեցինք հիմնավորել այն միտքը, թե հայագիտական աշխատանքների ասպարեզում ներկայումս առաջնակարգ նշանակություն ունի հայ մատենագրության ընդհանուր համաբարբառի ստեղծումը: Գիտահետազոտական երկարամյա աշխատանքի փորձն է, որ մեզ թելադրել է հայկական այդպիսի համապարփակ մի համաբարբառի անհրաժեշտության գաղափարը: Ուրախալի է, որ այժմ այդ գաղափարի մարմնավորման համար լուրջ աշխատանքներ են տարվում Ակադեմիայի քարտարանային բաժնում:

Այս մասին տարբեր կարծիք ունենալ չի կարող ոչ մի հայագետ և առհասարակ ոչ մի գիտնական: Թերթելով բաժնի այցելուների մատչանում եղող գրանցումները, կարելի է համոզվել, որ կատարվող գործը միայն հիացմունք է պատճառում գիտնականներին: Օրինակ՝ իտալացի հայագետ պրոֆ. Զ. Բոլոնիեզին (Միլանից) քարտարանային բաժնում կատարվող աշխատանքները գնահատում է որպես մի «իրապես ահռելի աշխատանք, որը բազմակողմանի ծառայություն է մատուցելու հայագիտությանը»¹²¹: Իսկ հունգարացի հայագետ դոկտ. Էդ. Շյուցը (Բուդապեշտից) գրում է.

«Նախ և առաջ ես պետք է նշեմ, որ ընտրված մեթոդն անթերի է և բավարարում է արդի լեզվաբանության պահանջները: Այս քրտնաջան աշխատանքի առաջին պտուղը՝ «Մովսես Խորենացու համաբարբառ»-ը աշխատանքի հիանալի մի նմուշ է, և այն ամենը, որ ես կկարողանամ ցանկանալ, այն է, որ Մովսես Խորենացուն հաջորդեն, հնարավորին չափ արագ, հայ մյուս հեղինակները, և որ այդ հոյակապ արդյունքները հրատարակվեն՝ որքան հնարավոր է շուտ, որովհետև ինչպես հեղինակային առանձին համաբարբառները, այնպես էլ հեղինակային համաբարբառների ամբողջությունը, որպես մի ընդհանուր համաբարբառ, որը կընդգրկի մեկտեղված ամբողջ նյութը, կհանդիսանա հայկական լեզվաբանության ու բանասիրության բոլոր

¹²¹ «... travail vraiment formidable qui apportera beaucoup de service à l'Arménologie» (Prof. G. Bolognesi).

քննազավառների ամենակենսական պահանջներից ու կարիքներից մեկը»¹²²:

Հայ մատենագիրների այն համաբարբառները, որոնք պատրաստ են կամ պատրաստվում են հրատարակության և լույս կտեսնեն հետզհետե, անտարակույս կհաստատեն վերոհիշյալ գնահատականները:

Հայկ. ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայում նախաձեռնված ու կատարվող այս աշխատանքները վերջին և ամենակատարյալ արդյունքներն են դարերի ընթացքում մեզ մոտ կուտակված փորձի և կազմում են շարունակունը հայ համաբարբառային գրականության երկրորդ՝ ընթացիկ հանգրվանի, գիտական համաբարբառներ ստեղծելու ուղղությամբ:

¹²² „First of all I must state that the chosen method is flawless and fills the requirements of modern linguistics. The first fruit of this assiduous work, the 'Hamabarbaŕ of Movses Xorenaci', is a fine piece of work, and all I can wish is that upon the footsteps of Movses Xorenaci there should follow the other Armentian authors in all possible speed, and that these fine achievements should be published at a possible earliest date, because as well the separate, author's hamabarbaŕs, as the resuming hama-barbaŕ, containing all the collected material, are one of the most ardent desires and needs of all branches of Armenian linguistics and philology" (Dr. Ed. Schütz).

Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Հայ համաբարբառային գրականության հետազոտությանը նվիրված մատենագրական և պատմա-քննական սույն ակնարկը, ինչպես տեսանք, անհրաժեշտաբար ընդգրկեց նաև մի շարք հարակից հարցեր, որոնք պատկանում են և՛ ընդհանուր բանասիրությանը և՛ հայագիտությանը:

Ընդհանուր բանասիրությանը հետաքրքրող հարցերից պիտի հատկապես նկատի ունենալ Տաստիանոս Ասորու, Ամոն Աղեքսանդրացու և Եվսեբիոս Կեսարացու համաբարբառների մեթոդական աղերսի հարցը, կապված՝ Ավետարանների բնագրային կանոնականության և ամբողջականության պահպանման հարցերի հետ:

Բնագրային համեմատությունների ուղու վրա Տաստիան-Ամոն գծի հատկանշական երևույթն էր՝ **բնագրերի կանոնականության խախտումը**: Տաստիանոսի մոտ այդ խախտումը հանդես էր եկել բնագրերի միաձուլմամբ, իսկ Ամոնի մոտ՝ բնագրերի մասերի տեղափոխումներով. բայց բնագրերի ամբողջականության հարցում նրանք հեռացել էին իրարից, որովհետև մինչ առաջինը, բնագրերն ի մի ձուլելով, կրճատումներ էր կատարել, երկրորդը բնագրերի միայն շարադրական ընթացքն էր խախտել՝ առանց կրճատումների: Այս վերջին իրողությունից էլ, որ մենք հանգամանորեն լուսաբանեցինք, առաջացել էր Ամոն-Եվսեբիոս գիծը, որի հատկանիշը **բնագրերի ամբողջականության պահպանումն** էր: Այստեղ էական է այն, որ, ըստ մեր եզրակացությունների, Ամոնի համաբարբառի բնագրային ընդգրկումները լինելով անթերի, Եվսեբիոսի համաբարբառի հետ նրա ունեցած առնչությունն ամբողջական էր և ոչ մասնակի, ուստի և՛ եվսեբյան համաբարբառը պարզապես և ամբողջապես ամոնյան համաբարբառի շրջումն էր՝ «ըստ այլում գումարությեան»: Դա միայն կառուցվածքի փոփոխություն էր, որի շնորհիվ վերանում էին ամոնյան համաբարբառում եղած՝ բնագրային կանոնականության խախտումները:

Լուսանցային կանոնների ծագման հարցում ընդհանուր բանասիրության համար կարևոր երևույթ են պարզում հայկական ձեռագրական տվյալները՝ Ավետարանների հնագույն թարգմանության հետ միասին այդ կանոնների ծագումը ցույց տալով ասորական աշխարհից:

Ի հարկե՛ լուսանցային կանոնների ուսումնասիրության արդյունքներն ավելի նշանակալից են հայագիտության համար: Մի կողմից այն փաստը, թե լուսանցային կանոնների առկայությունն ընդհանուր երևույթ է հայերեն Ավետարանի հնագույն ձեռագրերում, ինչպես է ասորական Պեշիտտոյի Ավետարանի ձեռագրերում, իսկ մյուս կողմից պատմական և բանասիրական տվյալներով հայտնի այն իրողությունը, թե ասորերենից էր կատարվել հայերեն Ավետարանների սկզբնական թարգմանությունը, անատարկելի են

դարձնում այն եզրակացությունը, թե լուսանցային կանոններն ասորականից են անցել մեզ՝ այդ թարգմանության հետ միասին, իսկ հետագայում, երբ այդ թարգմանությունը վերանայվել է հունական բնագրերի հիման վրա, միաժամանակ լուսանցային կանոնները ևս վերախմբագրվել են ու հարմարեցվել հունական եվսեբյան կանոնների տարազին: Հանգամանքների երկկողմանի համապատասխանությունը թույլ կտա նաև ասել, որ ձեռագրերում լուսանցային կանոնների պարզած երևույթն իր հերթին ամրապնդում է հայերեն Ավետարանների սկզբնապես ասորերենից թարգմանված լինելու պարագան:

Հայագիտության համար հարակից հարցերից է և այն, որ չորս Ավետարանների նախադրություններն ու գլխակարգությունները, և վերջիններիս կցված համաբարբառային կանոնները, Գեորգ Սկետացու հեղինակությունն են, հակառակ անցյալում եղած այն կարծիքին, թե նրա գրչին են պատկանում միայն Հին Կտակարանի նախադրություններն ու գլխակարգությունները: Ավետարանական այդ նախադրություններն ու գլխակարգություններն առաջին անգամ 1270 թվականին են երևան եկել, բայց Ժ դարից էլ առաջ գոյություն է ունեցել նույն գլխակարգությունների մի նախատիպը:

Եթե մի կողմ էլ թողնենք հարակից հարցերը, պիտի նկատի ունենալ, որ հայկական համաբարբառների ուսումնասիրությունն արդեն ինքնին մի ամբողջ շարք է մատենագրական ու բանասիրական կարևոր հարցերի: Եվ մենք արդեն իր ընդհանրության մեջ ուրվագծեցինք այդպիսիների պատկերը, ինչպես, օրինակ, դեռ վաղուց արծարծված այն հարցի, թե Տաոխանոսի Համաբարբառը Ե դարում պիտի թարգմանված լիներ հայերենի, կամ թե՛ Եվսեբիոսի համաբարբառային կանոնները նմանապես պիտի լինեին Ե դարում թարգմանված, ինչպես այժմ էլ Ավետարանի հնագույն ձեռագրերի քննությունը մեզ համոզում է, որ դրանք, Աստվածաշնչի երկրորդ թարգմանության ժամանակվանից, դարերով ուղեկցել են հայկական Ավետարանին, լուսանցային կանոնների հետ միասին: Այսպես և այլ հարցեր:

Ուշագրավ է այն երևույթը, որ համաբարբառային գրականությունը հայերի մոտ սկզբնական շրջանում, երբ հետազոտության համաբարբառային մեթոդը համեմատության առադրական եղանակով էր ընթանում, մնացել էր թարգմանական շրջանակների մեջ: Միակ նորությունը, որ հայը կարողացել էր մոծել այս գործի մեջ, այդ եղանակի շրջանակներում, դա գեորգյան կանոնաձև համաբարբառն էր: Ինքնուրույն զարգացման այս սահմանափակությունը մեթոդական սովյալ եղանակի բնույթից էր, որը տեղ չէր թողնում ծավալելու:

Համաբարբառային գրականության ինքնուրույն զարգացումը մեզանում հնարավոր է դարձել միայն այն շրջանում, երբ հետազոտության համաբարբառային մեթոդն արդեն անցել էր բառային-բառարանային եղանակի լայն կիրառմանը: Բառարանային ինքնուրույն համաբարբառ կազմելու առաջին փորձը, ինչպես տեսանք, ԺԷ դարում կատարեց Ղազար Բաբերդացին և այնուհետև ԺԸ, ԺԹ և Ի դարերում հրապարակելան հայկական մի շարք այդպիսի համաբարբառներ, որոնց վերաբերող փաստական սովյալներն ու մեր գնահատումներն արդեն ամփոփեցինք սուրբգրական և գիտական համաբարբառների բաժիններում՝ յուրաքանչյուրի մեջ ժամանակագրական կարգով:

Սակայն այդ համաբարբառները կառուցվածային առումով կարող են բաժանվել այլ բնույթի խմբավորումների, որոնց ճշտումը ցույց կտա համաբարբառային բառարանագրության զարգացման աստիճանները մեզանում, ժամանակի ընթացքում նրա կրած կերպարանափոխությունները: Խմբերի

հիմնական տարբերությունները ցույց տալու համար պայմանականորեն օգտագործենք Անձն և Առնում բառերը՝ հղումնան և խոնարհման մի քանի պարզ ձևերով:

Ա խ ու մ ք—Այբբենական բառացանկ, առանց վկայությունների:

Անձն (այս միակ բառի դիմաց, փոխանակ վկայությունների, թվա-
նշաններով հղումներ են տրվում դեպի բնագիրը).

Առնում (նույնպես)

Այս կառուցվածքն ունեն Ղազար Բաբերդացու «Ցանկ ի վերայ այբուբենից ... ըստ հայկական թոռոց»-ը, Հովհաննես Աստվածատրյանի՝ «Նարեկ» գրքին վերաբերող «Նշանակությունք խրթին բառից ինչ մատենիս»-ը և Հ. Գ. Ավետիքյանի «Ցուցակ մեկնելի բառից ինչ Նարեկին»-ը:

Բ խ ու մ ք—Բնագրային համաբարբառ, վկայություններով: Բառերը բերվում են բնագրում ունեցած քերականական առկա ձևերով և հետադաս կապակցություններով: Դասավորումը բառաշարում կատարվում է ըստ բառաձևի առաջին տառերի, ուստի և նույն բառի տարբեր ձևերն ընկնում են տարբեր տեղեր:

Անձամբ անձին գօտի ածէիր (դասավորվում է **Ա** տառի շարքում).

Անձին իրում գանձեցէ (նույնպես).

Ջանձինս առ արդարս ունել (դասավորվում է **Ջ** տառի շարքում).

Ջանձն իր կեցուցանել (նույնպես).

Յանձինս իրեանց ընդունէին (դասավորվում է **Յ** տառի շարքում).

Յանձն իր զգօրութիւնն (նույնպես).

շարքում).

Առեայ գօրականս եւ հարիրապետս (դասավորվում է **Ա** տառի

Առնուլ զհաց մանկանց (նույնպես).

Առնումք զհայցուածսն (նույնպես).

Առնուցու եւ պատմեցէ ձեզ (նույնպես).

Այսպիսի կառուցվածք ունեն Անանիա Ալլահվերդյանի «Ցանկ սրբոց չորից ավետարանչաց»-ը և Բաղդասար Կ. Պոլսեցու «Ցանկ գիրք Նոր Կտակարանին»-ը:

Գ խ ու մ ք—Բնագրային համաբարբառ, վկայություններով: Բառերը բերվում են, ինչպես Բ խմբում, բնագրում ունեցած քերականական առկա ձևերով և հետադաս կապակցություններով: Բառերի դասավորումը նույնպես այբբենական է, որի համար, սակայն, հաշվի է առնվում միայն բառի հիմքը, իսկ նրա սկզբին գտնվող նախդիրները կամ մասնիկները թողնվում են անընդհատ:

Անձամբ անձին գօտի ածէիր.

Անձին իրում գանձեցէ.

գ-**Անձինս առ արդարս ունել.**

յ-**Անձինս իրեանց ընդունէին.**

յ-**Անձն իր զգօրութիւնն.**

զ-**Անձն իր կեցուցանել.**

Առեալ զօրականս եւ հարիրապետս.

Առնուլ զհաց մանկանց.

Առնումք զհացուածսն.

Առնուցու եւ պատմեցէ ձեզ.

Այսպիսի կառուցվածք ունեն Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի «№ 2 համաքարբատ»-ը և Հակոբ Նալբանդին վերագրվող՝ Նարեկացու երկերի համաքարբատը:

Գ խ ու մ ք—Բնագրային համաքարբատ, վկայություններով: Բառը բերվում է իր քերականական ճիմնական ձևով և այդ միակ բառի տակ տեղադրվում են նույն բառը պարունակող ամբողջական վկայությունները:

Ա.Ճ.Ճ

- Որ կամիցի զԱ.Ճ.Ճ իր կեցուցանել՝ կորուցէ զնա.
- Գիտաց Յիսուս յԱ.Ճ.Ճ իր զգօրութիւնն որ էլ ի նմանէ.
- Առաքեցին դաւանանս կեղծաորեալս՝ զԱ.Ճ.Ճինս առ արդարս ունել.
- Մինչ մանուկն էիր՝ Ա.Ճ.Ճամբ անձին գօտի ածէիր.
- Իրաքանչիւր որ ի ձեռն Ա.Ճ.Ճին իրում գանձեցէ որ ինչ եւ յաջողեցի.
- Չդարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն անցա՝ յԱ.Ճ.Ճինս իրեանց ընդունէին.

Առնուլ

- Ոչ է բարոք Առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց.
- Յիմմէ անտի Առնուցու եւ պատմեցէ ձեզ.
- Գիտեմք՝ եթէ Առնումք զհացուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ.
- Որոյ անդէն Առեալ զօրականս եւ հարիրապետս՝ դիմեաց ի վերայ անցա.

Այս կառուցվածքով են 1848 թվականին Չմյուռնիայում հրատարակված նորկտակարանային անանուն համաքարբատը, 1895 թվականին Երուսաղէմում հրատարակված՝ Աստվածաշնչի համաքարբատը (Թադէոս վ. Աստվածատուրյանի), 1963 թվականին Բելյորոթում հրատարակված աշխարհաբար համաքարբատը (Վ. Գ. Սահակյանի) և Եզնիկի անտիպ համաքարբատը:

Ե խ ու մ ք—Քերականական համաքարբատ, առանց վկայությունների: Բառերը բերվում են բնագրից կտրված և դասավորվում են ըստ քերականական ձևերի հաջորդականության:

Ա.Ճ.Ճամբ անձին

Ա.Ճ.Ճ—անձին

—յանձն

—յանձինս

—զանձն

—զանձինս

Առեալ

Առնուլ

Առնում—առնումք

—առնուցու

Այսպիսի կառուցվածք ունի Խորենացու քերականական համաքարքառը, որ գլատիպով հրատարակել է Ակադեմիան:

Անհայտ է մնում այն, թե ո՞ր խմբին էին պատկանում Հովսեփի վ. Տեր-Ավագյանի կազմած համաքարքառը և «Բուրաստան խնկոց»-ը: Վերջինս, սակայն, ինչպես արվեց իր տեղում, հավանաբար նույն էր «№ 2 համաքարքառ»-ի հետ:

Վերոհիշյալ խմբավորումները սահմանելու համար մենք հաշվի ենք առել գոյություն ունեցող հայերեն համաքարքառների կառուցվածային ամենահիմնական որոշիչ տարբերությունները միայն և այդ պատճառով բերել ենք միայն քերականական ամենապարզ ձևեր ունեցող օրինակներ, որպեսզի չմանրանանք: Չմանրանալու մտահոգությունը գլխավորապես նրանից էր, որ Գ. խմբի համաքարքառների կառուցվածքի մասին գրական աղբյուրները, ինչպես տեսանք արդեն, նշում էին միայն մեր հիմնական համարած տվյալները և ուրիշ ոչինչ, ուստի և բացառված չէ, որ այդ համաքարքառներն ունենան նաև տարբերակումներ: Կարելի է նույնն ասել նաև բոլոր խմբերի վերաբերյալ, թե նույն խմբին պատկանող համաքարքառներից ամեն մեկը կարող է ներկայացնել որոշ տարբերակումներ, որոնք չեն ազդի հիմնականի վրա. այդպես են, օրինակ, Դ խմբին պատկանող համաքարքառները, որոնց նկարագրությունները տվել ենք համապատասխան տեղերում: Համեմայն դեպս՝ խմբավորումների վերոհիշյալ պատկերն իր ընդհանուր գծերի մեջ ներկայացնում է հայ համաքարքառային բառարանագրության անցած ուղին և կրած կերպարանափոխությունները՝ սկսած ԺԷ/ԺԸ դարերից:

Համաքարքառային գրականությունը թեև զարգացման երկար ժամանակաշրջան է ապրել մեզանում, Ե դարից մինչև մեր օրերը, բայց դեռ համակողմանի ուսումնասիրության առարկա չի եղել հայագիտության մեջ: Անցյալում նրա ունեցած նշանակության և ապագայում նրան վերապահված դերի մասին գիտական լիարժեք գնահատում դեռ չի տրվել: Մինչդեռ հայտնի է, որ սկզբում թարգմանական և հետո ինքնուրույն համաքարքառները դարերի ընթացքում մեզ մոտ օգտագործվել են պատմական, գաղափարախոսական և գիտական հետազոտությունների համար որպես մեթոդական ուղեցույցներ, որոնք աղբյուրագիտական և փաստագիտական նյութի մատակարարմամբ խթանել են հայ քննչական-հետազոտական մտքի զարգացումը: Հատկապես վերջին դարերում՝ հայ համաքարքառային գրականությունը զգալի զարգացման է հասել համաքարքառային բառարանագրության ուղիով և հայերեն լեզվի վրա հիմնված ինքնուրույն համաքարքառներով ստացել է ազգային նկարագիր, որովհետև նրա զարգացման ընթացքը կապվել է, ինչպես տեսանք վերևում, լեզվի քերականական երևույթների ընկալման հետ: Մեր օրերում՝ հայ համաքարքառային գրականությունը շարունակում է զարգանալ, մշակման ավելի կատարելագործված եղանակներով, որպես գիտա-մեթոդական գրականության սեր:

Հայագիտության համար հետազոտության համաքարքառային մեթոդի օգտագործումը լայն հեռանկարներ ունի բնագրաքննական, աղբյուրագիտական և լեզվաբանական աշխատանքների բնագավառում: Հին բնագրերի՝ սլատմական, գրական և գիտական երկերի համեմատական ուսումնասիրության, աղբյուրների քննության, ինչպես նաև հայերեն լեզվի օրինաչափությունների հետազոտության համար նոր ուղիներ են բացում համաքարքառները, և պատահական չէ, որ ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ցանցում ընդգրկված մասնագետների փոքրիկ խումբը ներկայումս նվիրված է հայ

մատենագրության ընդհանուր համաբարբառ ստեղծելու կարևոր գործին:

Այս ուղղությամբ անցյալում հայ մշակույթի համեստ գործիչներն աշխատել են իրենց անհատական նախաձեռնությամբ ու միջոցներով, և նրանցից ամեն մեկն իր ներդրումն է կատարել գործի մեջ. իսկ այսօր հայագիտության մշակները,— ոչ անհատաբար, այլ հավաքաբար,— շարունակում են այդ աշխատանքները՝ պետական միջոցների օգնությամբ: Հայագիտական աշխատանքների համար տրամադրված պետական լայն միջոցների շնորհիվ կան նյութական ու բարոյական այն բոլոր պայմանները, որոնցով կարելի է ապահովված համարել սկսված գործի շարունակումն ու ավարտումը: Սակայն այդ հսկա ծրագրի իրականացման համար, ըստ երևույթին, բավական չեն լինի գոյություն ունեցող այդ փոքրիկ խմբի՝ Կենտրոնական գրադարանին կից գործող քարտարանային բաժնի ուժերը և գուցե անհրաժեշտ համարվի այն վերածել ինքնուրույն հաստատության, որպեսզի հնարավոր լինի, ավելի մեծ ուժերով, աշխատանքները ծավալել այնպիսի չափերով, որոնք համապատասխանեն այդ օգտավետ գործի տարողությանը: Դա կլիներ ոչ միայն հայագիտության շահերի պահանջը. որովհետև հայագիտությունն ինքը համաշխարհային պատմության և մշակույթի ուսումնասիրությունների շարքին պատկանող բնագավառ է, հետևաբար և հայ մատենագրության համաբարբառները տեղեկատվության անգերազանցելի աղբյուր կլինեն նաև համաշխարհային առումով բոլոր տեսակի ու տիպի հետազոտությունների համար:

Հայտնի է, որ Մերձավոր և Միջին Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Եվրոպայի միջին-արևելյան մասի, Հարավային Ռուսաստանի և Կովկասի պատմական, առևտրական ու տնտեսական կյանքի բազմաթիվ փաստեր իրենց արտացոլումն են գտել հայ հին գրականության մեջ: Այնտեղ ամփոփված են նյութեր, որոնց վերաբերյալ գրավոր այլ աղբյուրներ գուցե առհասարակ գոյություն չունեն: Ծատ ժողովուրդների համար, որոնք ավելի ուշ ժամանակներում են անցել գրի ու գրականության, և կամ նույնիսկ չեն անցել մինչև մեր օրերը, հայ մատենագրությունը կարող է դիտվել իբրև իրենց հնագույն պատմության սկզբնաղբյուր: Հայ մատենագրության համաբարբառները կարող են մեծ նյութ մատակարարել բյուզանդագիտության, արաբագիտության, իրանագիտության և կովկասագիտության համար, ինչպես և գիտությունների պատմության համար:

Այս բոլոր տեսակետներով՝ հայ գրաբար մատենագրության ընդհանուր համաբարբառը համաշխարհային գիտության համար կհանդիսանա հսկայական արդյունքներ խոստացող հարուստ աղբյուր, որի շնորհիվ ավելի ևս կբարձրանա հայագիտության հարգն ու վարկը գիտական աշխարհում:

Հայ մատենագրության ընդհանուր համաբարբառ ստեղծելու ծրագրի իրագործումը կլինի հայ համաբարբառային դարավոր գրականության թագն ու պսակը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ա. ԸՆՏՐՈՎԻ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներկա աշխատության մեջ մենք հայտնեցինք այն միտքը, թե գիտականորեն երկրորդական կարգի նշանակություն ունեցող մի շարք երկերի համար կարելի է կամ պետք է կազմել ընտրովի քարտարաններ և համարաբառներ: Սակայն նկատեցինք, որ Ակադեմիայի քարտարանային բաժնի մասնագետների կարծիքով ընտրովի քարտարաններ կազմելը շատ աշխատատար գործ է և խլում է շատ երկար ժամանակ, որովհետև այդ գործը մեքենայացնել հնարավոր չէ: Նույն կարծիքն է տիրում նաև Լեզվի ինստիտուտում, ուր ընտրովի քարտագրության աշխատանքներ են կատարվում: Այդ աշխատանքի եղանակը հետևյալն է: Կարդացվում է հեղինակի երկը և այդ ընթացքում քարտի վրա է հանվում նրա մեջ պատահող ամեն մի ընտրելի բառ՝ համապատասխան նախադասության հետ միասին. և այդ աշխատանքը կատարվում է ձեռքով: Այս ձևով է, որ ռուսներն իրենց 7 միլիոնանոց ընտրովի քարտարանը ստեղծելու համար տրամադրել են 80 տարի, իսկ վրացիներն իրենց ընտրովի քարտարանը, ընդամենը 2 միլիոնի սահմաններում, ստեղծել են 40 տարվա ընթացքում: Ի հարկե՛ն՝ եթե այդպես է, պարզ է, որ լիակատար քարտարաններ կազմելը շատ ավելի ձեռնառու կհամարվեր, քան ընտրովի քարտարաններ կազմելը. և այդպես էլ՝ քարտարանային բաժինը չունի ընտրովի քարտարաններ կազմելու ծրագիր:

Սակայն խնդրի ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, թե լիովին հնարավոր է մեքենայացնել նաև ընտրովի քարտարաններ կազմելու գործը:

Ընտրովի քարտագրության համար կկատարվեն հետևյալ գործողությունները.

1. Համաբարբառի ենթարկվող գրքի վրա մասնագետի կողմից կընդգրծվեն բոլոր ընտրելի բառերը (ոչ նախադասությունները):

2. Եթե էջի վրա կա 1 ընդգծված բառ, 1 օրինակ կմեքենագրվի այդ բառը պարունակող հատվածը: Թերթի ճակատին կնշանակվի տվյալ բառը և թերթը կդառնա նրա քարտը:

3. Եթե էջի վրա կան մեկից ավելի ընդգծված բառեր, այդ էջը նույն քանակությամբ կբազմացվի գրամեքենայով (մինչև 4 օրինակ լինելու դեպքում) և կամ գլատիպ մեքենայով (4 օրինակից ավելի լինելու դեպքում): Ասեմք, թե էջի վրա գտնվող 250 բառերից ընդգծված են միայն 3 հատը և կամ 11 հատը. կնշանակի՝ այդ էջը կբազմացվի 3 և կամ 11 անգամ:

4. Բազմացված օրինակներից յուրաքանչյուրի ճակատին կգրվի ընտրված բառերից մեկը և այդ օրինակը կդառնա տվյալ բառի՝ քարտը:

5. Բազմացված բառաքարտերը կկտրատվեն և նրանցից ամեն մեկի վրա կյոթողնվի բնագրից միայն այնքան մաս, որը տվյալ բառին է պատկանում մտքի քերականական ամբողջության առումով:

6. Բառաքարտերը կենթարկվեն այբբենական դասավորման և դրանով պատրաստ կլինի ընտրովի քարտարանը:

7. Պատրաստի այդ քարտարանի հիման վրա կկազմվեն քերականական և բնագրային ընտրովի համաքարքառներ:

Այսպիսի մեքենայացված միջոցով ստացված արդյունքների հետ ոչ մի դեպքում չի կարող համեմատվել ձեռքով կատարվող աշխատանքը՝ արագության հիմաստով:

Ի դեպ՝ ասենք, որ ընտրովի քերականական կազմելը բարդություններ չի ներկայացնում, որովհետև լոկ բառերի քերականական ձևերի ընտրության հետ է կապված, բայց ընտրովի բնագրային կազմելը շատ դժվար գործ է, որովհետև կապված է ոչ թե բառի ձևերի, այլ նրա հետ առնչվող նախադասության պատմական նշանակության և բնագրային համեմատությունների համար ունեցած նպատակահարմարության հետ: Այդ պատճառով բնագրային ընտրովի համաքարքառ կազմելու գործը նախընտրելի է հանձնել ոչ թե լեզվաբանների, այլ բանասերների և պատմաբանների, որոնք գերծ կլինեն բառերի զուտ ձևաբանական երևույթներով տարվելու վտանգից, մի վտանգ, որը կարող է բնագրային լինելու սահմանված համաքարքառը հեռացնել նրա բնագրայնությունից և նպատակից:

Բնագրային ընտրովի համաքարքառները պիտի ընդգրկեն անխտիր բոլոր հատուկ անունները և գիտության տարբեր ճյուղերին պատկանող բազմազան տերմիններ՝ պատմական ու աշխարհագրական, քաղաքական, զինվորական ու ռազմական, հարկային, իրավագիտական, հնագիտական, ազգագրական, երկրագործական, արհեստագործական, առևտրական, ապրանքային, չափագիտական, կշռագիտական, դրամագիտական, հանքաբանական, բուսաբանական, կենդանաբանական, բժշկական, աստղաբաշխական (աստրոլոգիական), աստղագիտական (տիեզերագիտական) ու տոմարագիտական, արվեստաբանական (շինարարական-նարտարապետական, նկարչական-մանրանկարչական), գրականագիտական, մատենագիտական, գրչագրական (ձեռագրագիտական), իմաստասիրական, դիցաբանական, կրոնապատմական, դավանաբանական, մանկավարժական և այլն և այլն:

Բ. ԲՆԱԳՐԱՑԻՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌՆԵՐԻ ԿՐԾԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիտականորեն անտարկելի կառուցվածք ունեն Ակադեմիայի քարտարանային բաժնում պատրաստվող բնագրային համաքարքառները: Այդ մասին մենք նմուշներ բերեցինք Եզնիկի համաքարքառից, որը տպագրության է պատրաստվում: Նույն ձևով արդեն պատրաստ է նաև Կորյունի համաքարքառը: Սակայն նկատեցինք, որ քարտարանային բաժնում որոշ մտահոգություն է տիրում այն իմաստով, որ այս ձևով պատրաստված համաքարքառները ծավալով մի քանի անգամ ավելի սովոր են լինում, քան համաքարքառի ենթարկվող գրքերը:

Այս մտահոգությամբ քարտարանային բաժնում կրճատման ձևեր գտնելու փորձեր են կատարվում Ազաթանգեղոսի բնագրային համաքարքառի վրա: Ծանոթանալով այդ փորձերին՝ հայտնում ենք մեր կարծիքն ու թելադրանքները

Ի հարկե՝ անտեղի չէ բնագրային համաքարքառների կրճատման հարցը և անհրաժեշտ է մտածել այդ մասին լրջորեն: Սակայն կարծում ենք, որ այն սկզբունքը, որով կատարվում են կրճատման փորձերը, համապատասխան չեն համաքարքառի բնագրային բնույթին, որովհետև կրճատումներից հետո հաճախ մնում է միայն այնքան տեղեկություն, որն արդեն քերականական համաքարքառին է պատկանում և ոչ թե բնագրայինին: Բերենք ած բայարմատի հետ կապված մի քանի նմուշներ: Նախ տալիս ենք կրճատված ձևը, իսկ հավասարության նշանից հետո տալիս ենք լրիվ բնագիրը՝ կողքին, փակագծերում, նշելով Ազաթանգեղոսի թիֆլիսյան 1909 թվականի հրատարակության էջերը:

զմտաւ ածէի=զմտաւ ածէի ... թէ որպիսիք իցեն (382):

ածին զնա=ածին զնա առաջի նորա (66):

ածէ անձրեւ=ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց (308):

ածեալ ի կատարումն=ածեալ ի կատարումն զառաջապատում պատգամս Եսայեայ (246):

գոր ածելոց էք=գոր ածելոց էք դուք ի վերայ մեր (95):

ոչ ածին ընդ միտ=զայն ինչ ոչ ածին ընդ միտ՝ որ ի սկզբանէ Արարիչն էր (318):

Այսպես և ուրիշ շատեր: Ինչպես տեսնում ենք՝ կրճատված վկայությունների մեջ մնում են միայն տվյալ բառի քերականական ձևերը՝ կցկտոր կապակցություններով. նշանակում է՝ մնում են միայն այն տվյալները, որոնք հատուկ են քերականական համաքարքառին: Դրանում համոզվելու համար կարելի է այս օրինակները համեմատել Խորենացու քերականական համաքարքառում ած բայարմատով ներկայացված մի շարք ձևերի հետ, որ նախորդ էջերում բերեցինք՝ այդ համաքարքառը նկարագրելիս:

Այս հանգամանքը գեղծում է բնագրային համաբարբառի բնագրայնությունը՝ նրան հաղորդելով որոշ տոկոսի քերականական բնույթ և ստեղծում այն վտանգավոր տպավորությունը, թե քերականական և բնագրային կոչվող համաբարբառներն իրար են կրկնում:

Բայց, առանց այն էլ, այսպիսի կրճատումների ենթարկված բնագրերը հաճախ դառնում են անհասկանալի և կասկածելի: Օրինակ՝

ոչ ածէ զբարկութիւն—ոչ ածէ զբարկութիւն իւր (267):

ածեալ Աստուծոյ ... արարածս ... առ Ադամ—ածեալ Աստուծոյ զամենայն արարածս... առ Ադամ (143):

Այս օրինակներում մի իւր-ի և մի զամենայն-ի կրճատումները ոչ մի օգուտ չեն տալիս տեղ շահելու տեսակետից, բայց, ընդհակառակն, քերականորեն վնաս են տալիս վկայությանը և այն դարձնում՝ անընդունելի:

Մյուս կողմից՝ այս ձևի կրճատումները գրկում են բնագրային համաբարբառը իր նպատակին ծառայելուց: Մենք արդեն բավարար չստիով խոսեցինք այն մասին, թե բնագրային համաբարբառի նպատակը միջբնագրային համեմատությունների եզրեր հայթայթելն է, նրանց առնչությունները բացահայտելն է, աղբյուրների հետազոտությունն է: Եթե մի բառ,—մինևույն բառը,—բնագրային անհրաժեշտ կապակցություններով բերված չլինի տարբեր գրքերի համաբարբառներում, մենք կգրկվենք նմանությունները նկատելու, հետևաբար և աղբյուրագիտական եզրակացությունների հասնելու, հնարավորությունից: Այստեղ, կրճատված համաբարբառում, **Աղբիւր** բառի տակ տրվում է **աղբիւր կենդանութեան**, մինչ լրիվ բնագիրն է՝ **աղբիւր կենդանութեան զերաշտութիւն ծարաւոյն պապելոյն յագեցուցէ զքեզ (9)**: Եթե հետագայի որևէ հեղինակ օգտագործել է Ագաթանգեղոսի այս նախադասությունը կամ միտքը, մենք կարող ենք դյուրությամբ գտնել նրա աղբյուրը՝ Ագաթանգեղոսի բնագրային լիարժեք համաբարբառի միջոցով. մինչդեռ լոկ **աղբիւր կենդանութեան** բառերով գրեթե չենք կարող գտնել, որովհետև այդ փոքրիկ արտահայտությունը տարբեր կապակցություններով հարյուրավոր անգամներ գործածված է հայ միջնադարյան հոգևոր գրականության մեջ: Նույնը պիտի ասել **աղբիւր կենաց** կամ **բղխեսցէ աղբիւր** և նման կրճատված բնագրերի մասին, որոնք ամենևին պիտանի չեն բնագրային համաբարբառի նպատակների համար:

Բնագրային համաբարբառի նպատակների տեսակետից ձեռնառու է ոչ թե կրճատել բնագրերը, այլ նպատակահարմար կերպով թեթևացնել բառացանկը: Հիմնականը պիտի լինի որոշել, թե ի՞նչ կարգի բառեր պետք է ընդունել բառացանկի մեջ և ի՞նչ կարգի բառեր՝ ոչ. իսկ սա՝ կնշանակի որոշ առումով ընտրողական սկզբունք որդեգրել քարտագրական աշխատանքների մեջ՝ ելնելով բնագրային համաբարբառի ծանոթ նպատակներից:

Բնագրային նմանություններ ու նույնություններ հայտնաբերելու ծառայող լեզվական գլխավոր տարրերն են գոյականները (ներառյալ հատուկ անունները), ածականները և բայերը: Խոսքի մասերի մեջ ամենից ավելի նրանք են, որ ձևաբանական բազմազան առանձնահատկություններ և ինքնատիպ այլազանություններ են ներկայացնում, ուստի և հիմնականում կարելի է կանգ առնել նրանց վրա: Սկզբունքով կպահվեն, ուրեմն, բոլոր գոյականներն ու ածականները. նմանապես բայերը՝ բացառությամբ էական և մի քանի պակասավոր ու միադիմի բայերի (եմ, լինիմ, եղանիմ, գոմ, յայտ է, անկ է, մարթի և այլն): Իսկ դրանց շարքին չպատկանող բառերը կարելի է

առհասարակ դուրս թողնել՝ որպէս համեմատությունների գործում դեր չկատարող նյութ: Այդպիսիներ են դերանունները (ես, դու, նա, ինքն, իր, սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, իմ, քո, մեր, ձեր, որ, ով, ոմն, ոք և այլն), թվականները (մի, երկու, երեք, տասն, քսան, երեսուն, առաջին, առաջնորդ, երկրորդ, երրորդ, երկրքեան-երկրքին, երեքեան-երեքին, կրկին, երեքկին, չորեքկին, երկեակ, երրեակ, քառեակ և այլն), նախդիրները (իրենց հոլովական բոլոր գործածություններով), նախադրությունները (վասն, չաղագս, աղագաւ, ի սակս, ի վերայ, ի վերոյ, զհետ, զկնի, փոխանակ, մինչեւ, շուրջ և այլն), մակբայները (այսք, անդք, աստ, աստէն, աստանօր, այլուք, այլուստ, իբրեւ, յայնժամ, հանապազ, ընդ վայր, վերստին, ստուգի, հագի, ի դէպ և այլն), շաղկապները (եւ, նաեւ, եթէ, թէ, թէեւ, թէպէտեւ, կամ, այլ, այլ եթէ, բայց, սակայն, իսկ, ապա եթէ, զի, որպէս զի, վասն զի, քանզի, իբր զի, ապա ուրեմն, մինչ չեւ, չեւ եւս և այլն) և ձայնարկությունները (ո՛, ո՛հ, վա՛յ, վա՛շ, աա՛դ, օ՛ն և այլն):

Այս կարգի բառերի կրճատումն այստեղ՝ կորուստ չէ գիտության համար, որովհետև նրանք բոլորն իրենց տեղը կունենան համաբարբառի ենթարկված գրքի քերականական համաբարբառում: Կարելի է մշակել, ի հարկե, նաև այս ընդհանուր կարգից կատարվելիք ինչ-ինչ բացառությունների սկզբունքը, եթե դրանք անհրաժեշտ համարվեն, սակայն պետք է աշխատել՝ չգնալ այդ ուղիով, որովհետև բացառություններն անխուսափելիորեն դուռ կբանան բազմապիսի թյուրիմացությունների:

Բնագրային համաբարբառի նպատակների տեսակետից այս եղանակը չի խախտի համաբարբառի բնագրային բնույթը, իսկ մյուս կողմից կապահովի ծավալային շոշափելի տևտեսում՝ ի հաշիվ գրքի բառապաշարի խոշոր զանգվածի:

Սակայն այն դեպքերում, երբ գիրքը քերականական համաբարբառ չի ունենալու, պետք չէ կրճատման ենթարկել նրա բնագրային համաբարբառը, ո՛ր եղանակով էլ լինի, որպէսզի նա որևէ չափով ծառայի նաև լեզվաբանությանը: Այս դեպքում արդեն բնագրային համաբարբառը պիտի լինի լիակատար: Բնագրերով կրեւրվեն բոլոր բառերը՝ բացառությամբ նախդիրների, որոնց հոլովական գործածությունները ցույց տալու համար կնշվեն միայն էջերը՝ առանց բնագրերի. բայց որպէսզի դրանով չխաթարվի համաբարբառի բնագրային բնույթը, նախդիրները կտեղավորվեն գրքի վերջում առանձին՝ հավելվածի ձևով: Պետք է նույնպէս վարվել և շաղկապի հետ: Մեր կարծիքով լավ կլինի, եթե այսպէս դասավորվեն նաև Եզնիկի և Կորյունի բնագրային համաբարբառները, որոնք հրատարակության են պատրաստվում:

Այս կապակցությամբ նշենք, որ վերջերս քարտարանային բաժնում կըրճատման փորձերի հետ միասին փորձեր են արվում նաև բնագրային համաբարբառներում բառի վկայությունները դասավորելու՝ ոչ թե այն հաջորդականությամբ, որով նրանք պատահում են համաբարբառի ենթարկվող գրքի էջերում, այլ բառի գործածության քերականական ձևերի (հոլովում, խոնարհում, և այլն): Եթե քերականական այս դիտումը մշակվի ձեռնհասորեն և մուծվի բնագրային համաբարբառի մեջ, կարելի է հուսալ, որ լիովին կվերանա քերականական առանձին համաբարբառներ ունենալու անհրաժեշտությունը: Կվերանա նաև ինչպէս վկայությունների բնագրերը կրճատելու, այնպէս էլ համաբարբառի բառացանկը թեթևացնելու հարցը, և համաբարբառի երկու տեսակների միավորումը լիովին կապահովի անհրաժեշտ խնայողությունը:

